

ԼԵՌՆԱՅԻՆ
ՂԱՐԱԲԱՂԻՑ ԲՈՆԻ
ՏԵՂԱՀԱՆԿԱԾՆԵՐԻ
ՇՐՋԱՆՈՒՄ
ԱՇԽԱՏՈՒԺԻ
ԳՆԱՀԱՏՈՒՄ

Հոկտեմբեր, 2024



Սույն հրապարակման մեջ արտահայտված կարծիքները վեկույցի հեղինակների տեսակետներն են և պարտադիր չէ, որ համընկնեն Միգրացիայի միջազգային կազմակերպության (ՄՄԿ) տեսակետների հետ: Հրապարակման մեջ օգտագործված անվանումները և նյութի ներկայացումը չեն ենթադրում ՄՄԿ-ի կողմից այս կամ այն երկրի, տարածքի, քաղաքի կամ շրջանի կամ նրա իշխանությունների իրավական կարգավիճակի կամ դրա սահմանների վերաբերյալ որևէ կարծիքի արտահայտում:

ՄՄԿ-ն հավատարիմ է այն սկզբունքին, որ մարդասիրական և կանոնակարգված միգրացիան շահեկան է միգրանտների և հասարակության համար: ՄՄԿ-ի՝ որպես միջկառավարական մարմնի, փոխգործակցությունը միջազգային հանրության իր գործընկերների հետ նպատակուղղված է օգնելու միգրացիայի ոլորտում առկա մարտահրավերների լուծմանը, միգրացիայի հետ կապված հարցերի վերաբերյալ իրավեկության բարձրացմանը, միգրացիայի միջոցով սոցիալ-տնտեսական վարգացման խթանմանը, ինչպես նաև պաշտպանելու միգրանտների արժանապատվությունն ու ապահովելու նրանց բարեկեցությունը:

Սույն վեկույցի հրապարակումը հնարավոր է դարձել ՄՄԿ-ի՝ Հայաստանում փախստականների խնդիրների արձագանքման ծրագրի գործողությունների շրջանակներում մատուցվող խորհրդատվական ծառայությունների պայմանների համաձայն Սեբաստիան Ռոժոնի կողմից ցուցաբերած աջակցության շնորհիվ:

Հրապարակվել է Միգրացիայի միջազգային կազմակերպության կողմից

Հասցե՝ 17 route des Morillons
P.O. Box 17
1211 Ժնև 19
Շվեյցարիա
Հեռ.՝ +41 22 717 9111
Ֆաքս՝ +41 22 798 6150
Էլ. փոստ՝ hq@iom.int
Վեբ կայք՝ www.iom.int

Սույն վեկույցը Այս վեկույցը հրապարակվել է առանց ՄՄԿ-ի կողմից պաշտոնական խմբագրման:

Այս վեկույցը հրապարակվել է առանց ՄՄԿ-ի Հրատարակությունների բաժնի (PUB) կողմից դրա՝ ՄՄԿ-ի ապրանքանիշի և ոճի չափանիշներին համապատասխանության հաստատման:

Պահանջվող մեջբերում՝ Տե՛ս տարբերակները.

ISBN XXX-XX-XXXX-XX-X (PDF)

© IOM 2024



Որոշ իրավունքներ պաշտպանված են: Այս աշխատությունը հասանելի է դարձել [Creative Commons Attribution-NonCommercial-NoDerivs 3.0 IGO](https://creativecommons.org/licenses/by-nc-nd/3.0/igo/legalcode) լիցենզիայի (CC BY-NC-ND 3.0 IGO) ներքո¹:

Լրացուցիչ մանրամասների համար տե՛ս Հեղինակային իրավունք և օգտագործման պայմանները:

Սույն վեկույցը չպետք է օգտագործվի, հրապարակվի կամ տարածվի այնպիսի նպատակների համար, որոնք նախատեսված են հիմնականում առևտրային օգուտ կամ դրամական փոխհատուցում ստանալու համար, բացառությամբ կրթական նպատակների, օրինակ՝ դասագրքերում ներառելու համար:

Թույլտվություններ՝ Առևտրային նպատակով օգտագործման համար կամ լրացուցիչ իրավունքների կամ լիցենզավորման համար հայցումները պետք է ներկայացվեն publications@iom.int հասցեով:

1 <https://creativecommons.org/licenses/by-nc-nd/3.0/igo/legalcode>

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԻՄՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	7
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	12
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	13
ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՇԱՀԱՌՈՒ ԽՄԲԵՐ	15
ԱՇԽԱՏՈՂ ԱՆՁԱՆՑ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	18
ԳՈՐԾԱԶՈՒՐԿՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	29
ԱՇԽԱՏՈՂ ԵՎ ԳՈՐԾԱԶՈՒՐԿ ԱՆՁԱՆՑ ԹՎԱՔԱՆԱԿԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ	34
ԱՇԽԱՏՈՒԺԻՑ ԴՈՒՐՍ ԳՏՆՎՈՂ ԱՆՁԱՆՑ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	35
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ՁԵՌՔ ԲԵՐԱԾ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ	38
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	46
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	50

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿ

Աղյուսակ 1. Նախատեսված և անցկացված հարցապրոյեկտների բաշխումն ըստ մարզերի	14
Աղյուսակ 2. Աշխատող փախստականների բաշխումն ըստ սեռի և տարիքային խմբի (N=983)	19
Աղյուսակ 3. Աշխատող փախստականների բաշխումն ըստ սեռի և կրթության մակարդակի (N=983)	20
Աղյուսակ 4. Աշխատող փախստականների բաշխումն ըստ պբաղվածության կարգավիճակի և սեռի (N=260)	21
Աղյուսակ 5. Աշխատող փախստականների բաշխումն ըստ սեռի և աշխատանքային ժամերի (N=260)	23
Աղյուսակ 6. Աշխատող փախստականների բաշխումն ըստ ստացած կրթության և գործունեության տեսակի (N=971)	26
Աղյուսակ 7. Աշխատող փախստականների բաշխումն ըստ աշխատանքի և կրթության (N=971)	27
Աղյուսակ 8. Աշխատուժի կազմում չընդգրկված տղամարդկանց և կանանց բաշխումն ըստ տարիքային խմբերի (N=1392)	35
Աղյուսակ 9. Լրացուցիչ վերապատրաստում անցնելու պատճառներն ըստ սեռի (N=310)	42

ՆԿԱՐՆԵՐԻ ՑԱՆԿ

Նկար 1.	Աշխատունակ տարիքի բնակչության բաշխվածությունը Հայաստանում (2022թ.) և փախստականների միջև	16
Նկար 2.	Աշխատանք փնտրող փախստականների բաշխումն աշխատունակ տարիքի բնակչության շրջանում (N=927)	17
Նկար 3.	Տեղափոխվելու մտադրություն ունեցող փախստականների ընտանիքների տոկոսային ցուցանիշը (N=737)	19
Նկար 4.	Աշխատող փախստականների բաշխումն ըստ ISCO-ի աշխատանքի կատեգորիայի (N=972)	22
Նկար 5.	35 ժամից պակաս աշխատող փախստականների բաշխումն ըստ մարզերի (N=260)	24
Նկար 6.	Ժամանակի հետ կապված թերպահվածության բաշխումն ըստ մարզերի (N=30)	28
Նկար 7.	Ժամանակի հետ կապված թերպահվածության բաշխումն ըստ աշխատանքի կատեգորիաների (N=29)	28
Նկար 8.	Գործազրկության մակարդակի համեմատությունն ըստ մարզերի	30
Նկար 9.	Գործազուրկների բաշխումն ըստ տարիքային խմբերի և ըստ կրթության մակարդակի (N=924)	30
Նկար 10.	Վերջին աշխատանքից դուրս գալու/աշխատանքը դադարեցնելու պատճառները (N=301)	31
Նկար 11.	Գործազուրկ փախստականների նախկին պահվածությունը (N=301)	31
Նկար 12.	Գործազուրկների համար աշխատանք գտնելու խոչընդոտները (N=924)	33
Նկար 13.	Չ(աշխատող) փախստականների բաշխումն ըստ մարզերի (N=924)	34
Նկար 14.	Աշխատուժի մաս չկապմող անձանց չաշխատելու հիմնական պատճառները (N=1392)	35
Նկար 15.	Հաշվառումից մեկ շաբաթ առաջ չաշխատելու պատճառներն ըստ սեռի (N=1392)	36

Նկար 16. Սովորող/տնային գործերով/ընտանեկան պարտականություններով պբաղվող անձանց բաշխումն ըստ մարզերի (N=848)	36
Նկար 17. Լրացուցիչ վերապատրաստման կարիք ունեցողների բաշխումն ըստ աշխատողների թվի կարգավիճակի (N=1050)	39
Նկար 18. Վերապատրաստման կարիք ունեցող արական և իգական սեռի փախստականների բաշխումն ըստ աշխատուժի կարգավիճակի (N=310)	40
Նկար 19. Լրացուցիչ ուսուցման կարիք ունեցող փախստականների տնային տնտեսությունների տոկոսային մասնաբաժինն ըստ մարզերի (N=1050)	40
Նկար 20. Յուրաքանչյուր մասնագիտության շրջանակներում վերապատրաստման կարիք ունեցող գործավուրկ (աշխատող) փախստականների տոկոսային մասնաբաժինը (N=561)	41
Նկար 21. Ուսուցման նախընտրելի տևողությունը (N=310)	49
Նկար 22. Հիմնական հարցվածների՝ թվային տեխնոլոգիաների տիրապետման հմտությունները (N=1050)	44
Նկար 23. Հիմնական հարցվածների՝ լեզուների իմացությունը և փափուկ հմտությունները (N=1050)	45

ՀԻՄՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տեղափոխվելու մտադրություններ

- Փախստականների ընտանիքների տեղափոխվելու մտադրությունները, որպես կանոն, ավելի մեծ են Տավուշի (96%), Արմավիրի (91%) և Գեղարքունիքի (91%) մարզերում:
- Ինչպես աշխատող, այնպես էլ գործազուրկ փախստականների ընտանիքների ընդամենը մոտ 30 %-ն է մտադիր ավելի երկար ժամանակ մնալ նույն վայրում:
- Գործազուրկ և աշխատող ընտանիքների միգրացիայի մտադրությունները համեմատաբար նման են, բացառությամբ Նրա, որ գործազուրկ ընտանիքներն ավելի հակված են տեղափոխվել Երևան (38%՝ աշխատող ընտանիքների 25%-ի համեմատ) մինչդեռ աշխատող ընտանիքներն ավելի հակված են տեղափոխվել արտերկիր (25 տոկոս՝ 15%-ի համեմատ), ընդ որում, Ռուսաստանի Դաշնությունը ամենահաճախ հիշատակվող արտասահմանյան ուղղությունն է:

Աշխատող փախստականների խոցելիությունը

- 25 տոկոսն ունի բանավոր պայմանավորվածություն, այլ ոչ թե գրավոր կնքված պայմանագիր:
- Գրավոր պայմանագիր կնքած փախստականների 66%-ը չունի (կամ չգիտի՝ արդյոք ունի) ամենամյա արձակուրդի իրավունք, 76%-ը չունի (կամ չգիտի՝ արդյոք ունի) ժամանակավոր անաշխատունակության արձակուրդի իրավունք, 61%-ն ինքն է վճարում եկամտահարկը (կամ չգիտի, թե ով է պատասխանատու հարկերի վճարման համար):
- Որպես գործատու, ինքնաբերական կամ առանց վարձատրության աշխատող (ընտանիքի անդամին օգնող) փախստականների կեսից պակասը (48%) կարող են հաստատել, որ իրենց անձնական կամ ընտանեկան բիզնեսը կամ ֆերմերային տնտեսությունը գրանցված է:

Գործազրկություն

- Գործազրկության մակարդակը փախստականների շրջանում շատ ավելի բարձր է (49%), քան ընդհանուր բնակչության շրջանում (14%՝ ըստ ԱՐՄՍՏԱՏ-ի կողմից 2022 թվականին իրականացված աշխատուժի հետազոտության), իսկ փախստականների գործազրկության մակարդակն ամենաբարձրն է Կոտայքի, Լոռու և Տավուշի մարզերում:
- Գործազրկության մակարդակն ավելի բարձր է նաև կանանց շրջանում (53%)՝ արական սեռի փախստականների համեմատ (45%), և մասնագիտական կրթություն կամ ավելի ցածր կրթական մակարդակ ունեցող փախստականների շրջանում (51%)՝ բարձրագույն կրթություն ունեցողների համեմատ (45%):

- Թեև աշխատող փախստականները, որպես կանոն, ավելի բարձր կրթություն ունեն, քան գործազուրկները, շատ ավելի հավանական է, որ գործազուրկ փախստականները կունենան բարձրագույն կրթություն (40%), քան ընդհանուր բնակչության շրջանում գործազուրկ անձինք (12%՝ ըստ ԱՐՄՍՏՍՏ-ի 2022թ. ԱՀ-ի):
- Գործազուրկ փախստականների 77%-ի նախկին աշխատավայրը եղել է Լեռնային Ղարաբաղում, և տեղահանումը (81%-ի դեպքում) հանդիսանում է գործազուրկ փախստականների կողմից նախորդ աշխատանքը թողնելու հիմնական պատճառը:
- Գործազուրկ փախստականների ամենատարածված աշխատանքը եղել է մասնագետներ (25%), սպասարկման և վաճառքի ոլորտի աշխատողներ (19%), վիճակած ուժեր (11%), տեխնիկական և օժանդակ (կրտսեր) մասնագետներ (11%), արհեստավորներ և առևտրով զբաղվողներ (10%):
- Գործազուրկ փախստականների 99%-ը հայտնել է, որ աշխատանք են փնտրել հաշվառմանը նախորդող շաբաթվա, որոնց 64%-ը կցանկանար ունենար լրիվ դրույքով աշխատանք՝ 36 տոկոսի համեմատ, ովքեր նախընտրում են կես դրույքով աշխատանք:
- Կես դրույքով աշխատանքի պահանջարկը, ի տարբերություն լրիվ դրույքով աշխատանքի, զգալիորեն ավելի բարձր է գործազուրկ կանանց շրջանում (56%)՝ գործազուրկ տղամարդկանց համեմատ (14%):

Գերորակավորում կամ թերորակավորում

- Աշխատող փախստականների 40%-ը կարծում է, որ գերորակավորված է իր ներկայիս աշխատանքի համար, և գերորակավորված անձանց մասնաբաժինն ավելի մեծ է կանանց (60%), 22-44 տարեկան անձանց (62%), սպասարկման և վաճառքի ոլորտում աշխատող անձանց (40%) կամ հատուկ որակավորում չպահանջող (տարրական) աշխատանք կատարող անձանց (17%) շրջանում:
- (Վարձատրվող) տնային աշխատողների 30 տոկոսը և չվարձատրվող (ընտանիքի անդամին օգնող) տնային աշխատողների 60 տոկոսը հայտնել են, որ ունեն բարձրագույն կրթություն, ինչը վկայում է հնարավոր գերորակավորման մասին:
- Վերոնշյալ եպրահանգումը էլ ավելի ամրապնդվում է այն փաստով, որ ցածր որակավորում պահանջող աշխատանքով զբաղվող փախստականների զգալի մասն ունի բարձրագույն կրթություն: Օրինակ՝ սպասարկման և վաճառքի ոլորտի աշխատողների 39 տոկոսը, արհեստագործական և առևտրային ոլորտի աշխատողների 38 տոկոսը, կայանքների և սարքավորումների օպերատորների և հավաքակցողների 29 տոկոսը և տարրական աշխատանք կատարողների 19 տոկոսը հայտնել են բարձրագույն կրթություն ունենալու մասին:

Ժամանակի հետ կապված ոչ լիարժեք զբաղվածություն (թերզբաղվածություն)

- Աշխատող փախստականների մեկ քառորդը (25%) հայտնել է, որ աշխատում է կես դրույքով, այլ ոչ թե լրիվ դրույքով, իսկ 40%-ն ունի ժամանակավոր, սեպոնային կամ ոչ մշտական (միանգամյա) աշխատանք՝ մշտական/անժամկետ աշխատանքի փոխարեն:

- Աշխատող փախստականների 37%-ն աշխատել է 35 ժամից պակաս, ինչը ազգային վիճակագրական ծառայությունը (ԱՐՄՍՏԱՏ-ը) անվանում է «Կես դրույքով աշխատանք»՝ ընդհանուր բնակչության 18%-ի համեմատ: Աշխատող փախստականների 41%-ը համարվում է ,ոչ լիարժեք պեղվածություն ունեցող (թերպեղված)»-ը ինչը նշանակում է, որ նրանք կցանկանային լրացուցիչ ժամեր աշխատել նախորդ շաբաթվա ընթացքում:
- Թերպեղված լինելու հիմնական պատճառը (ըստ հարցվածների) հաճախորդների պակասն է, վարչական խոչընդոտները կամ աշխատանքի սեպոնային/ ժամանակավոր բնույթը:
- Թերպեղված փախստականների մասնաբաժինն ավելի մեծ է Լոռու, Շիրակի և Կոտայքի մարզերում, ինչպես նաև կայանքների և սարքավորումների օպերատորների և հավաքակցողների, արհեստագործական և առևտրային ոլորտի աշխատողների և մասնագետների մասնագիտական պատրաստվածության շրջանում:

Աշխատուժի թերօգտագործում

- Աշխատունակ տարիքի փախստականների՝ աշխատուժից դուրս լինելու (աշխատուժի մաս չկապելու) հիմնական պատճառներն են ընտանեկան պարտականությունները/տնային գործերը (33%), կրթությունը/վերապատրաստումը (28%) և թոշակի անցնելը (26%):
- Թեև իզական սեռի փախստականների ավելի մեծ մասնաբաժինը (41%), արական սեռի փախստականների համեմատ (8%), աշխատուժից դուրս էր ընտանեկան պարտականությունների/տնային գործերի պատճառով, այդ գործունեությամբ պեղվող կանանց 6 տոկոսը հայտնել է, որ, այնուամենայնիվ, փորձել է աշխատանք գտնել:
- Թեև աշխատուժից դուրս գտնվող փախստականների հարցվածների ընդհանուր թվի ընդամենը 4 տոկոսն է փորձել աշխատանք գտնել/սկսել բիզնես հաշվառմանը նախորդող շաբաթների ընթացքում, այդուհանդերձ, 38 տոկոսը նշել է, որ կսկսեր աշխատել, եթե հնարավորություն ընձեռնվեր, ինչը վկայում է աշխատաշուկայի չիրացված ներուժի մասին տևտեսապես ոչ ակտիվ փախստականների շրջանում:
- Աշխատանքի անցնելու պատրաստակամություն հայտնած անձինք հիմնականում բնակվում են Երևանում (46%), Կոտայքի (13%) և Արարատի (12%) մարզերում:

Վերապատրաստման պահանջարկը

- 1050 հիմնական հարցվածների շուրջ 30%-ը նշել է, որ պատրաստ է լրացուցիչ վերապատրաստում անցնել կամ մասնագիտական կրթություն ստանալ:
- Լրացուցիչ վերապատրաստման կարիք ունեցող փախստականների ընտանիքների մասնաբաժինը առավել մեծ է Կոտայքի (38%), Տավուշի (33%), Շիրակի (33%) և Սյունիքի (32%) մարզերում:
- Լրացուցիչ վերապատրաստման պահանջարկը երկու անգամ ավելի մեծ է իզական սեռի ներկայացուցիչների (34%) շրջանում փախստական տղամարդկանց համեմատ (17%):

- Լրացուցիչ վերապատրաստման կարիք ունեցող փախստական տղամարդիկ կա՛մ աշխատում են (40%), կա՛մ գործավուրկ (42%), մինչդեռ վերապատրաստման կարիք ունեցող փախստականներն, ավելի հավանական է, որ լինեն գործավուրկ (40%) կամ աշխատուժից դուրս (33%), քան աշխատողները (27%):
- Սույն վեկույցի համապատասխան բաժնում առավել մանրամասն ներկայացված հիմնական բացահայտումն այն է, որ լրացուցիչ վերապատրաստման կարիք ունեցող փախստականների մասնագիտական պատրաստվածությունն ըստ սեռի և զբաղվածության կարգավիճակի տարբեր է:
- Լրացուցիչ վերապատրաստում անցնելու հիմնական պատճառներն են ընդհանրապես աշխատանք գտնելը (52%) կամ այլ ոլորտում աշխատանք գտնելը (16%): Այնուամենայնիվ, լրացուցիչ վերապատրաստում անցնել ցանկացող փախստական կանայք ավելի շատ շեշտը դնում են ,իրենց ներկայիս պաշտոնում առաջխաղացում ստանալու ցանկության վրա, քան տղամարդիկ (կանանց շրջանում՝ 18%, տղամարդկանց շրջանում՝ 10%):
- Հարցվածների մեծամասնությունը (65%) նախընտրում է 1-ից 3 ամիս տևողությամբ ուսուցում:

Թվային տեխնոլոգիաների տիրապետման, լեզուների իմացության և փափուկ հմտությունների կարիք

- Լրացուցիչ վերապատրաստում ցանկացող փախստականների մոտ 50%-ը հայտնել է, որ իրենց վստահ չեն զգում հիմնական թվային գործիքներն օգտագործելիս, ինչպիսիք են՝ էլեկտրոնային փոստի հավելվածները, ինտերնետ բրաուզերները, Microsoft Office հավելվածները, տեսակապի հավելվածները և սոցիալական ցանցերը:
- Այնուամենայնիվ, ավելի քան 20%-ը նշել է, որ լրացուցիչ վերապատրաստման դեպքում կարող է իրեն վստահ զգալ առավել առաջադեմ թվային գործիքներ օգտագործելիս, ինչպիսիք են լուսանկարների խմբագրման և դիզայնի ծրագրակազմը, վաճառքի և շուկայավարման և հաշվապահական հաշվառման ծրագրերը: Այս անձինք հիմնականում բնակվում են Երևանում, Կոտայքի և Արարատի մարզերում:
- Լրացուցիչ վերապատրաստման կարիք ունեցող փախստականների ավելի քան 60%-ը հայտնել է, ,փափուկ հմտությունների բացակայության մասին, ինչպիսիք են՝ հրապարակային ելույթները, վեկույցների պատրաստումը, տեխնիկական տեղեկատվությունը լայն լսարանին հասցնելը, անձնակազմի կառավարումը, ինքնակենսագրականների կամ ուղեկցող նամակների պատրաստումը: Այս անձինք, ամենայն հավանականությամբ, տարիքով ավելի մեծ են (45+ տարեկան), ունեն ավելի ցածր մակարդակի կրթություն (մասնագիտական կրթություն կամ ավելի ցածր մակարդակ ունեցող) և աշխատուժից դուրս են:

Կողմնակալություն հարցվածների պատասխաններում

- Հարկ է նշել, որ թեև տնային տնտեսության բոլոր անդամների վերաբերյալ հիմնական սոցիալ-ժողովրդագրական տվյալները հասանելի են, հիմնական աշխատանքի, գործազրկության, աշխատանքային ժամերի կամ վերապատրաստման կարիքների վերաբերյալ ավելի մանրամասն հարցերին պատասխանել են հիմնական հարցվողները, որոնց մեծ մասը կանայք էին (72%): Ուստի (չնայած արդյունքները հաճախ ներկայացվում են առանձին տղամարդ և կին փախստականների համար), աշխատաշուկայում փախստականների իրավիճակի վերաբերյալ ավելի մանրամասն բացահայտումները կարող են շեղված լինել կանանց և աղջիկների փորձառությունների կողմը:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Ներքին գործերի նախարարության Միգրացիայի և քաղաքացիության ծառայության տվյալներով՝ 2023 թվականի սեպտեմբերից Լեռնային Ղարաբաղում լարվածության սրման հետևանքով Հայաստան է ժամանել ավելի քան 115 000 փախստական (ՄԱԿ ՓԳՀ, 2023թ., ՅՈՒՆԻՍԵՖ, 2024թ.): Ըստ 2023 թվականի հոկտեմբերից մինչև 2024 թվականի մարտն ընկած ամիսների համար նախատեսված Հայաստանում փախստականների խնդիրների արձագանքման միջգերատեսչական ծրագրի՝ փախստականների 28%-ը երեխաներ են, իսկ 18%-ը՝ տարեցներ: Փախստականները բնակություն են հաստատ երկրի տարբեր մարզերում, սակայն ամենաշատը գրանցվել է մայրաքաղաք Երևանում և հարակից Կոտայքի և Արարատի մարզերում (ՄԱԿ ՓԳՀ, 2023թ.): Շատ փախստականներ Երևան են ժամանել՝ աշխատանք փնտրելու նպատակով, այնուամենայնիվ, մայրաքաղաքը շարունակում է մնալ երկրի ամենաթանկ հատվածը, և տեղական իշխանությունների խոսքով՝ փախստականների թիվը շատ ավելի շատ է, քան առկա բնակարանները (Վարդանյան, 2024):

Փախստականների մեծ և արագ ներհոսքը, որն ընդամենը մի քանի շաբաթվա ընթացքում հանգեցրեց Հայաստանի բնակչության թվի մոտավորապես 3-4 տոկոս աճի, պահանջում է ինտեգրման և ներառման հպոր ռազմավարություն: Կառավարությունն աջակցել է ժամանող փախստականների ընդունման ու բնակեցմանը կազմակերպմանը, որոնք հիմնականում տեղավորվել են ընտանիքներում, պետական կացարաններում կամ իրենց սեփական տներում, այլ ոչ թե՛ փախստականների ճամբարներում: Բոլոր փախստականները քաղաքացիություն ստանալու իրավունք ունեն (թե՛ն ոչ բոլորն են քաղաքացիություն ստացել), և յուրաքանչյուր չափահաս ստացել է միանվագ վճար, այնուհետև նվազագույն աշխատավարձի չափով ամսական նպաստ՝ վարձակալության վճարը վճարելու և հիմնական կարիքները հոգալու համար (Վարդանյան, 2024):

Սակայն, ինչպես ընդգծվում է պետական շահագրգիռ կողմերի և միջազգային մարդասիրական կազմակերպությունների կողմից մշակված Փախստականների խնդիրների արձագանքման ծրագրում, Լեռնային Ղարաբաղից փախստականների տեղահանման խնդրի կայուն լուծումը կախված է նրանց կենսապահովման հնարավորություններից (ՄԱԿ ՓԳՀ, 2023թ.): Հետևաբար, կառավարությունը մշակել է ծրագրեր՝ ստեղծելու նոր աշխատատեղեր և վերապատրաստելու փախստականներին՝ նրանց երկարատև տեղահանումը կանխելու նպատակով (Վարդանյան, 2024թ.): Փախստականների տնտեսական ինտեգրումը դյուրինացնելու նպատակով Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և Միգրացիայի միջազգային կազմակերպության (ՄՄԿ) միջև խորհրդակցությունների արդյունքում մշակվել է Լեռնային Ղարաբաղից փախստականների մասնագիտական և կրթական բնութագրերի գնահատում: Սույն Վեկույցում կներկայացվեն այս գնահատման արդյունքները՝ աշխատաշուկայում փախստականների ինտեգրմանն ուղղված քաղաքականության և միջոցառումների մշակմանն աջակցելու նպատակով:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Sվյալների հավաքագրումն իրականացվել է «Պրիվա» հետազոտական և վերլուծական ընկերության կողմից: 2024թ. մարտին երկրի բոլոր մարզերում հարցվել է 1050 փախստական ընտանիք (նախատեսված և անցկացված հարցապրոյեկտների բաշխումը տես Աղյուսակ 1-ում): Ընդհանուր առմամբ, հաշվառվել է 4555 հարցվող, յուրաքանչյուր ընտանիքում միջինը 4,33 հարցվող:

Հարցապրոյեկտն անցկացվել են պլանշետներով հագեցած 25 հաշվարարների կողմից: Հարցման միջին տևողությունը կազմել է 24 րոպե: Տնային տնտեսություններ այցելությունները պլանավորվել են օրվա տարբեր ժամերին, ներառյալ երեկոյան և հանգստյան օրերին՝ հասանելիությունից կախված պատասխանների կողմնակալությունը կանխելու նպատակով: Ընտանիքների տված պատասխանների միջին ցուցանիշը կազմել է 73%: Որակի վերահսկումն ապահովելու նպատակով, բոլոր հարցապրոյեկտների 20%-ը ձայնագրվել և վերլուծվել է աշխատանքների ղեկավարի կողմից:

Թեև հավաքագրվել են ընտանիքի բոլոր անդամների վերաբերյալ հիմնական սոցիալ-ժողովրդագրական տվյալները, օրինակ՝ սեռը, տարիքը, կրթության մակարդակը և զբաղվածության կարգավիճակը, սակայն, հատկանշական է, որ ավելի մանրամասն հարցեր, օրինակ՝ զբաղվածության պատմության, աշխատանք չունենալու պատճառների, մասնագիտական և կրթական վերապատրաստման կարիքների և հմտությունների վերաբերյալ հարցերը, ընդգրկում են հարցվողների ավելի փոքր ենթախումբ (150-350 հարցվող): Սա, ամենայն հավանականությամբ, պայմանավորված է նրանով, որ տնային տնտեսության ղեկավարը կամ հիմնական հարցվողը չի կարող ձգգրիտ պատասխանել ընտանիքի բոլոր անդամների (ովքեր ներկա չեն եղել հարցապրոյեկտի ժամանակ) հետ կապված աշխատաշուկայի իրավիճակի վերաբերյալ ավելի մանրամասն հարցերին: Կարևոր է նաև նշել, որ հիմնական հարցվողները հաճախ կանայք էին (այսինքն՝ հիմնական հարցվածների 72%-ը), ինչը, ամենայն հավանականությամբ, պայմանավորված է հաշվառման պահին տնային տնտեսությունում կանանց և աղջիկների ֆիզիկական ներկայությամբ: Ուստի, աշխատաշուկայում փախստականների իրավիճակի վերաբերյալ մանրամասն բացահայտումները կարող են շեղված լինել կանանց և աղջիկների փորձառությունների կողմը:

Աղյուսակ 1. Նախատեսված և անցկացված հարցապրոյցների բաշխումն ըստ մարզերի

	Նախատեսված հարցապրոյցների թիվը	Անցկացված հարցապրոյցների թիվը
Երևան	485	482
Արագածոտն	34	35
Արարատ	138	140
Արմավիր	79	81
Գեղարքունիք	18	19
Լոռի	28	28
Կոտայք	147	142
Շիրակ	30	30
Սյունիք	67	69
Տավուշ	24	24
Ընդամենը	1050	1050

Բոլոր հիմնական վիճակագրական տվյալները, օրինակ՝ աշխատողների, գործազուրկների, տնտեսապես ոչ ակտիվ և թերպաղված անձանց վերաբերյալ, հաշվարկվել են Աշխատանքի միջազգային կապակերպության (ԱՄԿ), Աշխատանքի վիճակագիրների միջազգային համաժողովի (ԱՎՄՀ) առաջարկությունների համաձայն: Հաշվարկները կատարվել են Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի (ԱՐՄՍՏԱՏ) կողմից տրամադրված SPSS ծրագրային փաթեթի կիրառմամբ: Բոլոր համապատասխան փոփոխականները վերակոդավորվել կամ հաշվարկվել են SPSS-ում, իսկ տվյալների վիզուալացումները կառուցվել են Excel ծրագրում:

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՇԱՀԱՌՈՒ ԽՄԲԵՐ

Սույն պեկույցում ներկայացված չորս հիմնական վիճակագրական բաղադրիչները պատկանում են, գործադրության, աշխատուժից դուրս գտնվող անձանց և ժամանակի հետ կապված թերպատկանության վերաբերյալ վիճակագրական տվյալներն են: Այս կատեգորիաները սահմանված են Աշխատանքի միջապագային կապակերպության (2013թ.) «Աշխատանքի վիճակագրության», պատկանության և Աշխատուժի թերօգտագործման պեկույցում, որը քննարկվել է Աշխատանքի վիճակագրիների միջապագային 19-րդ համաժողովում (ԱՎՄՀ): Սահմանումներն և գնահատումներն ընդունվել են Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի (ԱՐՄՍՏԱՏ) կողմից:

Աշխատանքային ռեսուրսները կամ *աշխատունակ տարիքի բնակչությունը* համընդհանուր կատեգորիա է, որը վերաբերում է աշխատուժի ընդհանուր թվին (որը ներառում է ինչպես աշխատող, այնպես էլ գործազուրկ անձանց), ինչպես նաև աշխատուժի մաս չկապվող անձանց, այսինքն՝ այն անձինք, ովքեր ոչ աշխատում են, ոչ էլ գործազուրկ են: Աշխատունակ տարիքի բնակչությունն ընդգրկում է 15-75 տարեկան անձանց, ըստ ԱՐՄՍՏԱՏ-ի՝ Աշխատուժի հետապոստությունների ընդունված պրակտիկայի, և չպետք է շփոթել օրենքով սահմանված՝ 16-62 տարեկան աշխատունակ տարիքի հետ:

Աշխատող (պատկանած) անձինք սահմանվում են ըստ պատկանության կարգավիճակի երկու հիմնական կատեգորիաների՝ վարձու աշխատանք և ինքնաբերականություն, տարբերակելով երկու հիմնական խումբ՝ աշխատանքի մեջ գտնվող անձինք և աշխատանք կամ ձեռնարկություն ունեցող, բայց չաշխատող անձինք: ԱՎՄՀ 13-րդ նիստում ընդունված բանաձևի համաձայն՝ պատկանողների թվին են պատկանում աշխատունակ տարիքի բոլոր անձինք, ովքեր հաշվետու շաբաթվա ընթացքում՝

- ա) կամ ունեցել են «վարձու աշխատանք» (անկախ նրանից՝ աշխատել են, թե ժամանակավորապես բացակայել են աշխատանքից, սակայն ունեցել են օրինական գրանցված աշխատանք),
- բ) եղել են «ինքնաբերական» (անկախ նրանից, թե կատարել են աշխատանք շահույթ ստանալու, թե ընտանիքին օգուտ տալու նպատակով՝ դրամական, թե բնեղեն, թե ժամանակավորապես բացակայել են իրենց ձեռնարկությունից կամ ֆերմայից որևէ կոնկրետ պատճառով):

Աշխատող անձանց համար ԱՎՄՀ 13-րդ համաժողովի բանաձևը սահմանում է, որ «որոշակի աշխատանք» հասկացությունը պետք է մեկնաբանվի որպես հաշվետու ժամանակահատվածում առնվազն մեկ ժամ տևողությամբ աշխատանք:

² Խնդրում ենք նկատի ունենալ, որ չնայած ի սկզբանե ներկայացված նախնական վերլուծությունները հիմնված էին 15 տարեկան և ավելի բարձր տարիքի բոլոր անձանց վերաբերյալ տվյալների վրա, սույն պեկույցը նաև հաշվի է առնում 75 տարեկան տարիքային վերին շեմը, քանի որ նպատակահարմար չէ ընդգրկել 75 տարեկանից բարձր անձանց աշխատաշուկայում ինտեգրման ուսումնասիրության մեջ: Ընդհանուր առմամբ, 75 տարեկանից բարձր 170 մարդ կա, որոնցից 4-ը կսահմանվեն որպես «գործազուրկ», իսկ 166-ը՝ որպես «աշխատուժի մաս չկապվող», համաձայն ԱՐՄՍՏԱՏ-ի տրամադրած հաշվարկման մեթոդների:


Գործազուրկ են համարվում աշխատունակ տարիքի բնակչության բոլոր այն անդամները, ովքեր հաշվետու ժամանակահատվածում բավարարել են հետևյալ երեք պայմանները.

- ա) «առանց աշխատանքի», այսինքն՝ չեն կատարել վարձու աշխատանք կամ ինքնազբաղված չեն եղել,
- բ) «ներկայումս պատրաստ է աշխատանք կատարել», այսինքն՝ հաշվետու ժամանակահատվածում հասանելի են վարձու աշխատանք կատարելու կամ սեփական բիզնեսով զբաղվելու (ինքնազբաղվածություն) համար,
- գ) «աշխատանք փնտրող», այսինքն՝ ձեռնարկել են վարձու աշխատանք գտնելու կամ սեփական բիզնեսով զբաղվելու համար կոնկրետ քայլեր:

Գործազուրկների կատեգորիան ներառում է նաև այն անձանց, ովքեր հաշվառմանը նախորդող չորս շաբաթվա ընթացքում աշխատանք չեն ունեցել և աշխատանք չեն փնտրել, քանի որ պայմանավորվածություն են ձեռք բերել հաշվառմանը հաջորդող երկու շաբաթվա ընթացքում սկսել վարձու աշխատանք կամ սեփական բիզնես:

Ի վերջո, աշխատունակ տարիքի բնակչության թվին է պատկանում նաև *աշխատուժից դուրս գտնվող բնակչությունը*, որը վերաբերում է այն անձանց, ովքեր մեկշաբաթյա հաշվետու ժամանակաշրջանում չեն աշխատել, աշխատանք չեն փնտրել և մնացել են տնտեսապես ոչ ակտիվ: Աշխատուժից դուրս գտնվող բնակչության թվին կարող պատկանել առկա ուսուցում ստացող ուսանողները, տնային տնտեսուհիները, կենսաթոշակառուները, հաշմանդամություն ունեցող անձինք, խնամատարները կամ այլ անձինք, ովքեր տարբեր պատճառներով աշխատանք չեն փնտրում, օրինակ՝ անշարժ գույքից վարձավճար են ստանում: Խնդրում ենք նկատի ունենալ, որ 75 տարեկանից բարձր անձինք այս կատեգորիայում չեն ընդգրկվել՝ աշխատունակ տարիքի համար սահմանված վերին շեմի համաձայն:

Նկար 1. Աշխատունակ տարիքի բնակչության բաշխվածությունը Հայաստան (2022թ.) և փախստականների միջև



Նկար 1-ում ներկայացվում է ընդհանուր բնակչության (ըստ ԱՐՄՍՍԱՏ-ի կողմից 2022 թվականին իրականացված Աշխատուժի հետազոտության) և Լեռնային Ղարաբաղից հարցված փախստականների շրջանում բաշխվածության համեմատությունը: Հարցված 4555 փախստականներից 3299-ը աշխատունակ տարիքի են (մնացած 1256-ը կամ

մինչև 15 տարեկան են, կամ 75 տարեկանից բարձր): Ինչպես ցույց է տրված նկարում, փախստականների թվում գործազուրկների տոկոսային ցուցանիշը զգալիորեն ավելի բարձր է, քան ընդհանուր բնակչության շրջանում (28%՝ 8%-ի համեմատ), մինչդեռ ընդհանուր բնակչության թվում աշխատանք ունեցողների մասնաբաժինը զգալիորեն ավելի մեծ է, քան փախստականների մոտ (48%՝ 30%-ի համեմատ):


Այս վեկույցի համար հետաքրքրություն է ներկայացնում նաև ժամանակի հետ կապված թերաբաղվածության ցուցանիշը: ԱՎՄՀ 16-րդ համաժողովում տրված սահմանման համաձայն՝ ժամանակի հետ կապված թերաբաղվածուն ունեցող անձինք համարվում են հետևյալ երեք չափանիշներին համապատասխանող աշխատողները, ովքեր

- ա) ցանկանում էին աշխատել լրացուցիչ ժամեր,
- բ) պատրաստ էին աշխատել լրացուցիչ ժամեր,
- գ) աշխատել են ազգային օրենսդրությամբ սահմանված աշխատաժամերի շեմից պակաս:

ՀՀ վիճակագրական կոմիտեի ներկայացրած՝ ժամանակի հետ կապված թերաբաղվածության վերաբերյալ տվյալների վերլուծության (որը ներկայացնում է այն անձանց թվի ամփոփ ցուցանիշը, ովքեր՝ ա) ցանկանում էին ավելի շատ ժամեր աշխատել, բ) ցանկանում էին փոխել իրենց ներկայիս աշխատանքային պայմանները, և գ) աշխատել են 36 ժամ ազգային շեմից պակաս) համաձայն՝ ժամանակի հետ կապված թերաբաղվածություն ունեցող աշխատող փախստականների ցուցանիշը կազմել է ընդամենը 3,10%: Այնուամենայնիվ, եթե մենք այս չափանիշները տարածենք բոլոր աշխատող փախստականների վրա, ովքեր պատրաստ էին մեկշաբաթյա հաշվետու ժամանակահատվածում լրացուցիչ ժամեր աշխատել, ապա ժամանակի հետ կապված թերաբաղվածություն ունեցող անձանց մասնաբաժինը կաճի մինչև 41%: Սույն վեկույցի նպատակների համար մենք օգտագործել ենք ժամանակի հետ կապված թերաբաղվածության վերջին, ավելի ընդգրկուն սահմանումը: Հարկ է նշել, որ թերաբաղվածությունը վերաբերում է վարձու աշխատողների կատեգորիային պատկանող անձանց ենթախմբին:

Աշխատանք փնտրողները, որը թեև վիճակագրորեն սահմանված անձանց կատեգորիա չէ, առանձնահատուկ նշանակություն ունեն այս վեկույցի համար: Ընդհանուր առմամբ, 927 հարցվածներ հայտնել են, որ աշխատանք են փնտրել հաշվառմանը նախորդող չորս շաբաթվա ընթացքում: Այնուամենայնիվ, աշխատանք փնտրողների բաշխվածությունն ըստ աշխատունակ տարիքի բնակչության տարբեր կատեգորիաների (տե՛ս Նկար 2) ցույց է տալիս, որ աշխատանք փնտրողների թիվը հիմնականում համընկնում է գործազուրկների թվի հետ. աշխատանք փնտրողների 93%-ը գործազուրկ է, մինչդեռ 1%-ից պակասը աշխատող անձինք են, և ընդամենը 6%-ն աշխատուժի մաս չեն կազմում: Հետևաբար, սույն վեկույցում գործազուրկները դիտվում են որպես աշխատանք փնտրող անձինք:

Նկար 2. Աշխատանք փնտրող փախստականների բաշխումն աշխատունակ տարիքի բնակչության շրջանում (N=927)



ԱՇԽԱՏՈՂ ԱՆՁԱՆՑ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ


Սոցիալ-ժողովրդագրական բնութագիր

Աշխատող փախստականների ընտանիքների (այսինքն՝ տնային տնտեսության ղեկավարը աշխատում էր) ընդամենը 8 տոկոսն է հայտնել, որ փոխել է իր բնակության վայրը հաշվառմանը նախորդող 3 ամիսների ընթացքում՝ 2023թ. դեկտեմբերից մինչև 2024թ. մարտ (ինչը շատ նման է գործազուրկ փախստականների ընտանիքների տեղաշարժի ցուցանիշին՝ 9%)։ Ոչ վերջերս տեղափոխված աշխատող ընտանիքների 31%-ը մտադիր է մշտապես մնալ իրենց ներկայիս բնակավայրում, 17%-ը մտադիր է մնալ մինչև մեկ տարի, 10%-ը մտադիր է տեղափոխվել մեկ տարի անց, իսկ 40%-ը չգիտի՝ ցանկանում է մնալ, թե տեղափոխվել։ Աշխատող ընտանիքները, որոնք չեն պլանավորում մշտապես մնալ, մտադիր են տեղափոխվել կամ Երևան (25%), կամ այլ երկիր (25%), կամ դեռևս չորոշված վայր (27%)։ Այլ երկիր տեղափոխվելու մտադրություն ունեցող 47 աշխատող ընտանիքների մեծ մասը պլանավորում է տեղափոխվել Ռուսաստանի Դաշնություն (70%)։ Փախստականների ընտանիքներն ընդհանուր առմամբ դիտարկելիս (տե՛ս Նկար 3), պարզ է դառնում, որ տեղափոխվելու մտադրությունները, որպես կանոն, ավելի մեծ են Տավուշի (96%), Արմավիրի (91%) և Գեղարքունիքի (91%) մարզերում տնային տնտեսությունների շրջանում։

Աշխատող փախստականների համար առաջատար երեք մարզերն են Երևանը (53%), Արարատը (14%) և Կոտայքը (10%), մինչդեռ զբաղված փախստականների միայն 1-2%-ն է բնակություն հաստատել համապատասխանաբար Գեղարքունիքի, Տավուշի, Շիրակի և Լոռու մարզերում։ Աշխատող փախստականների ձևաչափի մեծամասնությունը (82%) հայտնել է, որ իրենց հիմնական աշխատանքը քաղաքում է, այլ ոչ թե գյուղական բանակավայրում (չնայած այս տեղեկությունն առկա է 983 աշխատող փախստականներից ընդամենը 260-ի վերաբերյալ)։ ԱՐՄՍՍՍՏ-ի 2022թ. Աշխատուժի հետապոտության տվյալներից ելնելով կարելի է եզրահանգել, որ տոկոսային այս ցուցանիշը զգալիորեն ավելի բարձր է, քան ընդհանուր բնակչության շրջանում, որտեղ աշխատող անձանց 59%-ն է աշխատում քաղաքային բնակավայրում։

Ինչպես ցույց է տրված Աղյուսակ 2-ում, աշխատող փախստականների շրջանում տղամարդիկ ավելի հաճախ են հանդիում (59%), քան կանայք։ Այս անհավասարակշռությունը փոքր-ինչ ավելի մեծ է, քան ընդհանուր բնակչության շրջանում, որտեղ տղամարդիկ կազմում են աշխատող անձանց 56%-ը՝ ըստ ԱՐՄՍՍՍՏ-ի 2022թ. ԱՀ-ի տվյալների։ Բացի այդ, սեռային անհավասարակշռությունն առավել բնորոշ է 25-34 և 65-74 տարիքային խմբերին, որտեղ աշխատող անձանց շրջանում գրեթե երկու անգամ ավելի հաճախ են հանդիպում տղամարդիկ։ Չնայած նրան, որ աշխատող տղամարդիկ հիմնականում 25-ից 44 տարեկան են, զբաղված կանայք ավելի հավասարաչափ են բաշխված տարիքային խմբերում։

Նկար 3. Տեղափոխվելու մտադրություն ունեցող փախստականների ընտանիքների տոկոսային ցուցանիշը (N=737)



Աղյուսակ 2. Աշխատող փախստականների բաշխումն ըստ սեռի և տարիքային խմբի (N=983)

Տարիքային խմբեր	Արական (%)	Իգական (%)	Ընդամենը	
15-24 (%)	% տարիքային խմբում	51.1	48.9	100.0
	% ըստ սեռի	12.2	17.0	14.1
25-34 (%)	% տարիքային խմբում	66.7	33.3	100.0
	% ըստ սեռի	26.8	19.5	23.8
35-44 (%)	% տարիքային խմբում	60.4	39.6	100.0
	% ըստ սեռի	30.4	28.9	29.8
45-54 (%)	% տարիքային խմբում	55.6	44.4	100.0
	% ըստ սեռի	17.9	20.7	19.0
55-64 (%)	% տարիքային խմբում	53.8	46.2	100.0
	% ըստ սեռի	9.8	12.2	10.8

65-74 (%)	% տարիքային խմբում	70.8	29.2	100.0
	% ըստ սեռի	2.9	1.7	2.4
Ընդամենը (%)	% տարիքային խմբում	59.2	40.8	100.0
	% ըստ սեռի	100.0	100.0	100.0

Ինչպես ցույց է տրված Աղյուսակ 3-ում, աշխատող փախստականների 47%-ն ունի բարձրագույն կրթություն, 18%-ը՝ մասնագիտական հետմիջնակարգ կրթություն, իսկ 30%-ը՝ միջնակարգ կրթություն: Աշխատող անձանց ընդամենը 6 տոկոսն ունի միջնակարգից ցածր կրթություն, այսինքն՝ հիմնական (5-9-րդ դասարաններ) կամ ավելի ցածր մակարդակի կրթություն: Բարձրագույն կրթություն ունեցող աշխատող անձինք ավելի մեծ տոկոս են կազմում կանանց (56%), քան տղամարդկանց շրջանում (40%), մինչդեռ միջնակարգ կամ ավելի ցածր կրթություն ունեցող աշխատող անձանց թվում ավելի մեծ տոկոս են կազմում տղամարդիկ, քան կանայք: Այս արդյունքները վկայում են բարձրագույն կրթության առկայության դեպքում փախստական կանանց աշխատանքի ընդունվելու ավելի մեծ հավանականության մասին, մինչդեռ բարձրագույն կրթություն ունենալը մի փոքր պակաս կարևոր է փախստական տղամարդկանց աշխատանքի դեպքում, որոնց կեսից ավելին ունի միջնակարգ, մասնագիտական կամ ավելի ցածր մակարդակի կրթություն:

Աղյուսակ 3. Աշխատող փախստականների բաշխումն ըստ սեռի և կրթության մակարդակի (N=983)

Կրթություն		Արական (%)	Իգական (%)	Ընդամենը (%)
Հիմնականից ցածր (%)	% կրթության տվյալ մակարդակի շրջանակներում	100.0	0.0	100.0
	% ըստ սեռի	0.5	0.0	0.3
Հիմնական (%)	% կրթության տվյալ մակարդակի շրջանակներում	75.0	25.0	100.0
	% ըստ սեռի	7.2	3.5	5.7
Միջնակարգ (%)	% կրթության տվյալ մակարդակի շրջանակներում	69.3	30.7	100.0
	% ըստ սեռի	34.5	22.2	29.5
Մասնագիտական (%)	% կրթության տվյալ մակարդակի շրջանակներում	58.0	42.0	100.0
	% ըստ սեռի	17.4	18.2	17.7
Բարձրագույն (%)	% կրթության տվյալ մակարդակի շրջանակներում	51.1	48.9	100.0
	% ըստ սեռի	40.4	56.1	46.8
Ընդամենը (%)	% կրթության տվյալ մակարդակի շրջանակներում	59.2	40.8	100.0
	% ըստ սեռի	100.0	100.0	100.0

Ջրադրվածության բնութագիր

Ինչ վերաբերում է պբաղվածության ոլորտում փախստականների կարգավիճակին (տե՛ս Աղյուսակ 4), ապա նրանց 74%-ը վարձու աշխատող է, (ընդհանուր բնակչության 67%-ի համեմատ) 7%-ը՝ գործատու (ընդհանուր բնակչության 2%-ի համեմատ), 15%-ը՝


ինքնազբաղված (ընդհանուր բնակչության 31%-ի համեմատ) և 1%-ը՝ որպես ընտանիքի անդամին օգնող՝ առանց վարձատրության աշխատող (ընդհանուր բնակչության 1%-ի համեմատ): Այսպիսով, փախստականների շրջանում, ընդհանուր բնակչության համեմատ, ավելի շատ աշխատողներ և գործատուներ և ավելի քիչ ձեռնարկատերեր կան: Կարևոր է նշել, որ զբաղվածության կարգավիճակի մասին տվյալներ կան 983 աշխատող փախստականներից միայն 260-ի վերաբերյալ: Փախստականների շրջանում վարձու աշխատողների, ինքնազբաղվածների (այսինքն՝ բիզնեսի սեփականատերերի) և ընտանիքին օգնող՝ առանց վարձատրության աշխատող անձանց թվում կանայք ավելի հաճախ են հանդիպում (համապատասխանաբար 64, 56 և 100%), մինչդեռ գործատուներն ավելի հաճախ տղամարդիկ են (58%):

Աղյուսակ 4. Աշխատող փախստականների բաշխումն ըստ զբաղվածության կարգավիճակի և սեռի (N=260)

Զբաղվածության կարգավիճակ		Արական (%)	Իգական (%)	Ընդամենը (%)
Վարձու աշխատող	% ըստ զբաղվածության կարգավիճակի	35.9	64.1	100.0
	% ըստ սեռի	69.7	76.4	73.8
Գործատու	% ըստ զբաղվածության կարգավիճակի	57.9	42.1	100.0
	% ըստ սեռի	11.1	5.0	7.3
Ինքնազբաղված	% ըստ զբաղվածության կարգավիճակի	43.6	56.4	100.0
	% ըստ սեռի	17.2	13.7	15.0
Ընտանիքի անդամին օգնող՝ առանց վարձատրության աշխատող	% ըստ զբաղվածության կարգավիճակի	0.0	100.0	100.0
	% ըստ սեռի	0.0	1.9	1.2
Այլ	% ըստ զբաղվածության կարգավիճակի	28.6	71.4	100.0
	% ըստ սեռի	2.0	3.1	2.7
Ընդամենը (%)	% ըստ զբաղվածության կարգավիճակի	38.1	61.9	100.0
	% ըստ սեռի	100.0	100.0	100.0

Ինչ վերաբերում է գործունեության տեսակին, ապա աշխատող փախստականների մեծ մասը ստանում է աշխատավարձ ապրանքների կամ ծառայությունների համար (71%), վարում է սեփական բիզնեսը (12%) կամ աշխատում է որպես տնային աշխատող (9%): Ինչ վերաբերում է զբաղմունքին (Նկար 4), ապա փախստականների ամենամեծ մասնաբաժինն աշխատում է սպասարկման և վաճառքի ոլորտում (24%), որին հաջորդում են տարրական աշխատանք կատարողները (16%), մասնագետները (16%) և արհեստավորներն ու առևտրով զբաղվողները (13%): Այս երեք կատեգորիաների մեջ ամենատարածված աշխատանքներն են վաճառողները/օգնականները, կոսմետոլոգները/վարսահարդարները, պահակները, անվտանգության աշխատակիցները, բանվորները, հավաքարարները, ուսուցիչները, բժիշկները, շինարարները և հացթուփները:

Նկար 4. Աշխատող փախստականների բաշխումն ըստ ISCO-ի աշխատանքի կատեգորիայի (N=972)



Հնարավոր խոցելիություն³

Աշխատող փախստականների 25 տոկոսն ունի բանավոր պայմանավորվածություն, այլ ոչ թե գրավոր կնքված պայմանագիր:

- Գրավոր պայմանագիր կնքած փախստականների 66%-ը չունի (կամ չգիտի՝ արդյոք ունի) ամենամյա արձակուրդի իրավունք,
- 76%-ը չունի (կամ չգիտի՝ արդյոք ունի) ժամանակավոր անաշխատունակության արձակուրդի իրավունք,
- 61%-ն ինքն է վճարում եկամտահարկը (կամ չգիտի, թե ով է պատասխանատու հարկերի վճարման համար)⁴:

Կնքված գրավոր պայմանագիր ունեցող, բայց ամենամյա արձակուրդ չունեցող աշխատող փախստականների զբաղմունքի երեք ամենատարածված կատեգորիաներն են՝ գործավարարական աշխատանք կատարողներ (100%), գյուղատնտեսության, անտառտնտեսության և ձկնաբուծության ոլորտի աշխատողներ (100%) և արհեստավորներ և առևտրով զբաղվողներ (94%): Կնքված գրավոր պայմանագիր ունեցող, բայց ժամանակավոր անաշխատունակության արձակուրդի համար չվճարված աշխատող փախստականների զբաղմունքի երեք

³ Կարևոր է նշել, որ խոցելիության վերաբերյալ տվյալները հիմնված են շատ ավելի փոքր թվով հարցվածների պատասխանների վրա (983-ից մոտավորապես 150-300 աշխատող), և որ այդ հարցվածների մեծ մասը (մոտ 60-70%) կանայք էին: Դա բացատրվում է նրանով, որ այդ հարցերին հիմնականում պատասխանել են տնային տնտեսությունների ղեկավարները/հիմնական հարցվողները, իսկ տնային տնտեսությունների ղեկավարները/հիմնական հարցվողները ավելի հաճախ եղել են կանայք (62%):

⁴ Հայաստանում գործատուները պարտավոր են աշխատողից պահել եկամտահարկը և սոցիալական ապահովության վճարները: 2024 թվականի դրությամբ Հայաստանում եկամտահարկի դրույքաչափը կազմում է 20% և կիրառվում է վարձատրության բոլոր ձևերի նկատմամբ՝ անկախ գումարի չափից: Եկամտահարկից բացի գործատուները պարտավոր են նաև պահել սոցիալական վճար, որը մինչև 500 000 դրամ եկամտի դեպքում հավասար է 5% (Վարդանյան և գործընկերներ, 2024թ.):

ամենատարածված կատեգորիաներն են՝ ղեկավարներ (100%), գործավարական աշխատանք կատարողներ (100%), գյուղատնտեսության, անտառտնտեսության և ձկնաբուծության ոլորտի աշխատողներ (100%): Եվ, ի վերջո, կնքված գրավոր պայմանագիր ունեցող փախստականների դեպքում, ովքեր իրենք են վճարում եկամտահարկը, զբաղմունքի երեք ամենատարածված կատեգորիաներն են՝ գյուղատնտեսության, անտառտնտեսության և ձկնաբուծության ոլորտի աշխատողներ (100%), արհեստավորներ և առևտրով զբաղվողներ (88%) և կայանքների և սարքավորումների օպերատորներ և հավաքակցողներ (86%):


Որպես գործատու, ինքնազբաղված կամ ընտանիքի անդամին օգնող՝ առանց վարձատրող աշխատող փախստականների մոտավորապես կեսը (48%) կարող է հաստատել, որ իրենց անձնական կամ ընտանեկան բիզնեսը կամ ֆերմերային տնտեսությունը գրանցված է: Այն անձինք, ովքեր չեն գրանցել իրենց բիզնեսը կամ ֆերմերային տնտեսությունը, հիմնականում աշխատում են սպասարկման կամ վաճառքի ոլորտում կամ կայանքների և սարքավորումների օպերատորներ և հավաքակցողներ են:

Աշխատող փախստականների մեկ քառորդը (25%) աշխատում է կես դրույքով՝ լրիվ դրույքով աշխատողների թվի համեմատ, իսկ 40%-ն ունի ժամանակավոր, սեպոնային կամ ոչ մշտական աշխատանք՝ ի տարբերություն մշտական/անժամկետ աշխատանք ունեցողների: Կես դրույքով աշխատելու հիմնական պատճառներն են աշխատանքի սեպոնային բնույթը (33%), գործատուի որոշումը (17%) կամ լրիվ դրույքով աշխատատեղերի պակասը (16%): Կես դրույքով աշխատող անձինք հիմնականում աշխատում են սպասարկման և վաճառքի ոլորտում կամ որպես մասնագետ:

Աղյուսակ 5. Աշխատող փախստականների բաշխումն ըստ զբաղվածության կարգավիճակի և սեռի (N=260)

Աշխատանքային ժամեր		Արական (%)	Իգական (%)	Ընդամենը (%)
35 ժամից պակաս	% ըստ աշխատաժամերի	36.5	63.5	100.0
	% ըստ սեռի	35.4	37.9	36.9
35-ից 48 ժամ	% ըստ աշխատաժամերի	36.4	63.6	100.0
	% ըստ սեռի	39.4	42.2	41.2
48 ժամից ավել	% ըստ աշխատաժամերի	43.9	56.1	100.0
	% ըստ սեռի	25.3	19.9	21.9
Ընդամենը	% ըստ աշխատաժամերի	38.1	61.9	100.0
	% ըստ սեռի	100.0	100.0	100.0

Նկար 5. 35 ժամից պակաս աշխատող փախստականների բաշխումն ըստ մարզերի (N=260)



Վերջապես, ինչպես ցույց է տրված Աղյուսակ 5-ում, աշխատող փախստականների 37%-ն աշխատել է 35 ժամից պակաս, ինչը ԱՐՄՍՍԱՏ-ն անվանում է «կես դրույքով աշխատանք»՝ ընդհանուր բնակչության 18%-ի համեմատ: 41 տոկոսն աշխատել է 36-ից 48 ժամ, որն ԱՐՄՍՍԱՏ-ը կոչում է «լրիվ դրույքով աշխատանք»՝ ընդհանուր բնակչության 64%-ի համեմատ: Եվ վերջապես, 22%-ն աշխատել է 48 ժամից ավելի, ինչն ԱՐՄՍՍԱՏ-ն անվանում է «նորմալ աշխատաժամից երկար տևող աշխատանք (գերծանրաբեռնված աշխատանք)»՝ ընդհանուր բնակչության 18% - ի համեմատ: Ընդհանուր բնակչության աշխատանքային օրվա տևողության վերաբերյալ տվյալները վերցվել են 2019 թվականին ԱՐՄՍՍԱՏ-ի կողմից իրականացված աշխատուժի հետապոտությունից: Ինչպես ցույց է տրված Նկար 5-ում, «կես դրույքով» կամ 36-48 ժամ սովորական շեմից պակաս աշխատող փախստականների տոկոսային մասնաբաժինն ավելի մեծ է Գեղարքունիքի (100%), Արմավիրի (68%) և Լոռու (60%) մարզերում: Սովորական շեմից պակաս աշխատող անձինք առավելապես հանդիպում են հետևյալ մասնագիտական կատեգորիաներում՝ մասնագետներ (61%), կայանքների և սարքավորումների օպերատորներ և հավաքակցողներ (58%) և գյուղատնտեսության, անտառտնտեսության և ձկնաբուծության ոլորտում աշխատողներ (50%):

Շաբաթական միջին աշխատանքային ժամերից ավել աշխատող անձանց տոկոսային ցուցանիշը փոքր-ինչ ավելի բարձր է տղամարդկանց, քան կանանց (25%` 20%-ի համեմատած) շրջանում: Գերծանրաբեռնված ժամերով աշխատող մարդիկ առավել հաճախ հանդիպում են հետևյալ մասնագիտական կատեգորիաներում՝ գյուղատնտեսության, անտառտնտեսության և ձկնաբուծության ոլորտում աշխատողներ (50%), սպասարկման և վաճառքի ոլորտի աշխատողներ (35%) և արհեստագործական և առևտրի ոլորտի աշխատողներ (29%):

Հնարավոր գերորակավորում և թերորակավորում

Աշխատող փախստականների 53%-ը կարծում է, որ իրենց ներկայիս աշխատանքը համապատասխանում է իրենց ստացած կրթությանը, մինչդեռ 40%-ի կարծիքով իրենց աշխատանքի համար նրանք գերորակավորված են, իսկ 8%-ը թերորակավորված: Առավելապես կանայք (60%), հիմնականում 22-ից 44 տարեկան անձինք (62%), սպասարկման և վաճառքի ոլորտում աշխատողները (40%) կամ տարրական աշխատանք կատարողները (17%) կարծում են, որ գերորակավորում ունեն: Այն եզրահանգումը, որ աշխատող կանայք ավելի հավանական է, որ իրենց գերորակավորված զգան, քան աշխատող տղամարդիկ, մոտ է ավելի վաղ արված այն եզրակացությանը, որ բարձրագույն կրթությունն ավելի մեծ նշանակություն ունի փախստական կանանց, քան փախստական տղամարդկանց աշխատանքի տեղավորման համար:

Ինչպես ցույց է տրված Աղյուսակ 6-ում, բոլոր աշխատող փախստականների 50%-ից մի փոքր պակաս, ովքեր վարձու աշխատողներ են կամ վարում են իրենց սեփական բիզնեսը (որոնք միասին կազմում են բոլոր աշխատող փախստականների 83%-ը), ստացել են բարձրագույն կրթություն: Ձեռնարկատերերի 18%-ը և վարձու աշխատողների 17%-ը ստացել են մասնագիտական կրթություն: Ձեռնարկատերերի 31%-ը և վարձու աշխատողների 28%-ը ունի միջնակարգ կրթություն: Հիմնական դպրոցական կամ ավելի ցածր կրթությամբ աշխատող փախստականների տոկոսային ցուցանիշը փոքր-ինչ ավելի բարձր է վարձու աշխատողների շրջանում (6%), քան ձեռնարկատերերի մոտ (3%): Այսպիսով, վարձու աշխատողները կարող են ունենալ կրթության և վերապատրաստման մի փոքր ավելի շատ կարիքներ, քան ձեռնարկատերերը:

Աղյուսակ 6. Աշխատող փախստականների բաշխումն ըստ ստացած կրթության և գործունեության տեսակի (N=971)

Գործունեության տեսակ		Հիմնականից ցածր	Հիմնական	Միջնակարգ	Մասնագիտական	Բարձրագույն	Ընդամենը
Սեփական բիզնես	% ըստ գործունեության տեսակի	0.0	2.5	30.8	17.5	49.2	100.0
	% ըստ կրթության մակարդակի	0.0	5.5	12.9	12.2	13.0	12.4
Վարձու աշխատող	% ըստ գործունեության տեսակի	0.1	6.0	28.0	16.9	49.0	100.0
	% ըստ կրթության մակարդակի	33.3	74.5	66.9	67.4	74.0	70.6
Տնային աշխատող	% ըստ գործունեության տեսակի	0.0	6.0	44.6	19.3	30.1	100.0
	% ըստ կրթության մակարդակի	0.0	9.1	12.9	9.3	5.5	8.5
Չվարձատրվող տնային աշխատանք կատարող	% ըստ գործունեության տեսակի	0.0	0.0	16.2	24.3	59.5	100.0
	% ըստ կրթության մակարդակի	0.0	0.0	2.1	5.2	4.8	3.8
Տնային տնտեսությունում գյուղատնտեսական աշխատանք կատարող	% ըստ գործունեության տեսակի	10.5	21.1	31.6	26.3	10.5	100.0
	% ըստ կրթության մակարդակի	66.7	7.3	2.1	2.9	0.4	2.0
Աշկերտ կամ պրակտիկանտ	% ըստ գործունեության տեսակի	0.0	7.7	34.6	19.2	38.5	100.0
	% ըստ կրթության մակարդակի	0.0	3.6	3.1	2.9	2.2	2.7
Ընդամենը	% ըստ գործունեության տեսակի	0.3	5.7	29.6	17.7	46.8	100.0
	% ըստ կրթության մակարդակի	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0

Հարկ է նշել, որ (վարձատրվող) տնային աշխատողների 30%-ը, չվարձատրվող տնային աշխատողների (այսինքն՝ ընտանիքը պահելու և ընտանիքի բարեկեցությունն ապահովելու համար չվարձատրվող տնային աշխատանք կատարող ընտանիքի անդամներ) 60%-ը և տնային տնտեսությունում գյուղատնտեսական աշխատանք կատարողների 11%-ը հայտնել են, որ ունեն բարձրագույն կրթություն, ինչը վկայում է հնարավոր գերորակավորման մասին: Արական սեռի փախստականների ներկայացվածությունը գործունեության բոլոր տեսակներում բարձր է, բացառությամբ չվարձատրվող տնային աշխատողների, որոնց 57%-ը կանայք են (43% տղամարդկանց համեմատ): Այս երաժիշտությունը էլ ավելի ամրապնդվում է ստացած կրթության մակարդակի և աշխատանքի համեմատական աղյուսակով (Աղյուսակ 7), որտեղ երևում է, որ ցածր որակավորում պահանջող մասնագիտական կատեգորիաներում զբաղված փախստականների զգալի մասն ունի բարձրագույն կրթություն: Օրինակ՝ սպասարկման և վաճառքի ոլորտի աշխատողների 39%-ը, արհեստագործական և առևտրային ոլորտի աշխատողների 38%-ը, կայանքների և սարքավորումների օպերատորների և հավաքակցողների 29%-ը և տարրական աշխատանք կատարողների 19%-ը հայտնել են բարձրագույն կրթություն ունենալու մասին:

Աղյուսակ 7. Աշխատող փախստականների բաշխումն ըստ աշխատանքի և կրթության (N=971)


ISCO-ի կատեգորիա	Հիմնականից ցածր (%)	Հիմնական (%)	Միջնակարգ (%)	Մասնագիտական (%)	Բարձրագույն (%)	Ընդամենը (%)
Զինված ուժեր	0.0	4.1	26.5	4.1	65.3	100.0
Ղեկավարներ	0.0	0.0	13.3	6.7	80.0	100.0
Մասնագետներ	0.0	0.6	7.8	8.4	83.1	100.0
Տեխնիկական և օժանդակ մասնագետներ	0.0	3.9	14.5	13.2	68.4	100.0
Գործավարներ	0.0	4.8	19.0	14.3	61.9	100.0
Սպասարկման և առևտրի ոլորտի աշխատողներ	0.4	6.3	32.9	21.1	39.2	100.0
Գյուղատնտեսության, անտառտնտեսության և ձկնաբուծության ոլորտի աշխատողներ	14.3	7.1	42.9	21.4	14.3	100.0
Արհեստավորներ և առևտրականներ	0.0	4.7	34.1	23.3	38.0	100.0
Կայանքների և սարքավորումների օպերատորներ և հավաքակցողներ	0.0	2.8	44.3	23.6	29.2	100.0
Տարրական աշխատանքներ	0.0	14.8	44.5	21.3	19.4	100.0
Անորոշ	0.0	0.0	6.3	18.8	75.0	100.0
Ընդամենը	0.3	5.7	29.5	17.8	46.7	100.0

Ժամանակի հետ կապված թերյաբաղվածություն


Աշխատող անձանց թվում կարող են լինել որոշ ,թերյաբաղվածե անձինք: Ինչպես ավելի վաղ էր նշվել, մենք ընդունել ենք ժամանակի հետ կապված թերյաբաղվածության ավելի լայն սահմանում, որը ներառում է բոլոր այն անձանց, ովքեր հայտնել են, որ ցանկանում են ավելի շատ ժամեր աշխատել մեկշաբաթյա հաշվետու ժամանակահատվածում կամ իրենց ներկայիս աշխատանքում, կամ այլ աշխատանքում: Այս սահմանման հիման վրա՝ հարցվածների թվում աշխատող փախստականների 41%-ը համարվել է որպես թերյաբաղված: Թերյաբաղվածություն ունեցող փախստականները, ովքեր նախորդ շաբաթվա ընթացքում ավելի քիչ ժամեր են աշխատել, սովորաբար նշել են, որ դա պայմանավորված է եղել հաճախորդների պակասով, վարչական խոչընդոտներով կամ աշխատանքի սեպոնային բնույթով:

Ժամանակի հետ կապված թերյաբաղվածություն ունեցողների տոկոսային ցուցանիշը համեմատաբար նման է սեռային, տարիքային և կրթական խմբերում: Սակայն կան թերյաբաղվածության պզալի տարբերություններ մարզերի և մասնագիտական կատեգորիաների ցուցանիշների միջև: Ինչպես ցույց է տրված Նկար 6-ում, լրացուցիչ ժամեր աշխատել ցանկացողների մասնաբաժինն ավելի մեծ է Լոռու, Շիրակի և Կոտայքի մարզերում: Ինչպես ցույց է տրված Նկար 7-ում, լրացուցիչ ժամեր աշխատել ցանկացողների մասնաբաժինն ավելի մեծ է կայանքների և սարքավորումների օպերատորների ու հավաքակցողների, արհեստավորների և առևտրով զբաղվողների և մասնագետների շրջանում:

Նկար 6. Ժամանակի հետ կապված թերպահվածության բաշխումն ըստ մարզերի (N=30)



Նկար 7. Ժամանակի հետ կապված թերպահվածության բաշխումն ըստ աշխատանքի կատեգորիաների (N=29)



ԳՈՐԾԱԶՈՒՐԿՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Սոցիալ-ժողովրդագրական բնութագիր

Կերջին երեք ամիսների ընթացքում գործազուրկ փախստականների ընտանիքների ընդամենը 9%-ն է փոխել իրենց բնակության վայրը, ինչը համընկնում է աշխատող փախստականների ընտանիքների տոկոսային ցուցանիշի հետ: Իրենց բնակության վայրը փոխած փախստականները հիմնականում տեղափոխվել են Հայաստանի սահմաններում: Զգալիորեն ընտանիքների 30%-ը մտադիր է մշտապես մնալ իրենց ներկայիս բնակավայրում, 16%-ը մտադիր է մնալ մինչև մեկ տարի, 4%-ը մտադիր է տեղափոխվել մեկ տարի անց, իսկ 50%-ն իր անելիքները դեռ չգիտի: Գործազուրկ և աշխատող ընտանիքների գաղթելու մտադրությունները համեմատաբար նման են, բացառությամբ այն բանի, որ փոքր-ինչ ավելի հավանական է, որ գործազուրկ ընտանիքները կցանկանան տեղափոխվել Երևան (38%՝ աշխատողների 25%-ի համեմատ), մինչդեռ փոքր-ինչ ավելի հավանական է, որ աշխատող ընտանիքները կցանկանան տեղափոխվել արտերկիր (25%՝ 15%-ի համեմատ):

Ինչպես ցույց է տրված Նկար 8-ում, գործազուրկության մակարդակը, որը ներկայացնում է գործազուրկների տոկոսային մասնաբաժինը ընդհանուր աշխատուժի մեջ, զգալիորեն ավելի բարձր է փախստականների շրջանում (49%), քան ընդհանուր բնակչության թվում (14%): Փախստականների գործազուրկության մակարդակն ամենաբարձրն է Կոտայքի, Լոռու և Տավուշի մարզերում, մինչդեռ ընդհանուր բնակչության գործազուրկության ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է Տավուշում, Երևանում և Կոտայքում:

Գործազուրկ փախստականներն ըստ սեռի համեմատաբար հավասարաչափ են ներկայացված (տղամարդիկ՝ 51%, կանայք՝ 49%): Գործազուրկ անձանց ամենաբարձր ցուցանիշը (66%) բաժին է ընկնում 25-ից 54 տարեկաններին: Ինչ վերաբերում է կրթության մակարդակին, ապա միջնակարգ (31) կամ հիմնական կրթություն (5-9-րդ դասարաններ) (6%) ունեցող գործազուրկ փախստականների տոկոսային ցուցանիշը նման է միևնույն կրթական մակարդակն ունեցող աշխատող փախստականների ցուցանիշին (համապատասխանաբար 30 և 6%): Այնուամենայնիվ, ավելի հավանական է, որ գործազուրկ փախստականներն ունենան մասնագիտական կրթություն, քան աշխատողները (23%՝ 18%-ի համեմատ) և ավելի քիչ հավանական է, որ ունենան բարձրագույն կրթություն, քան աշխատող փախստականները (40%՝ 47%-ի համեմատ): Հետևաբար, գործազուրկ փախստականներին աշխատաշուկայում ինտեգրելու ջանքերը կարող են մի փոքր ավելի շատ ուղղված լինել մասնագիտական կրթություն ունեցող անձանց: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ գործազուրկ փախստականներն ունեն կրթության ավելի բարձր մակարդակ, քան ընդհանուր բնակչության թվում գործազուրկ անձինք: Արմստատի 2022 թվականի աշխատուժի հետազոտության տվյալների համաձայն՝ գործազուրկների ընդամենը 12%-ն ունի բարձրագույն կրթություն՝ գործազուրկ փախստականների 40%-ի համեմատ:


Նկար 9-ի առավել մանրամասն ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 45 և բարձր տարիքի գործազուրկներն ավելի հավանական է, որ ունենան մասնագիտական կրթություն, մինչդեռ 25-ից 44 տարեկան անձինք ավելի հավանական է, որ ունենան

բարձրագույն կրթություն: Զարմանալի չէ, որ հիմնական կրթություն ունեցող գործազուրկների տոկոսային ցուցանիշն ավելի բարձր է 15-ից 24 տարեկան տարիքային խմբի մեջ, որոնց թվում դեռ չավարտած անձինք են:


Նկար 8. Գործազրկության մակարդակի համեմատությունն ըստ մարզերի

Ընդհանուր բնակչության գործազրկության մակարդակը

Փախստականների գործազրկության մակարդակը



Նկար 9. Գործազուրկների բաշխումն ըստ տարիքային խմբերի և ըստ կրթության մակարդակի (N=924)




Զբաղվածության պատմություն

Գործազուրկ փախստականների 85 տոկոսը նախկինում աշխատանք է ունեցել Հայաստանում կամ Լեռնային Ղարաբաղում, իսկ մնացած 15 տոկոսը նախկինում երբեք չի աշխատել: Նախկինում Հայաստանում կամ Լեռնային Ղարաբաղում աշխատածների 77 տոկոսի վերջին աշխատավայրը եղել է Լեռնային Ղարաբաղում,

իսկ 8 տոկոսինը՝ Հայաստանում: Նրանց 81%-ը երեքից մինչև 12 ամիս աշխատանք չի ունեցել, 12%-ը՝ մեկ տարուց ավելի, իսկ 6%-ը՝ 3 ամսից պակաս ժամանակահատվածում: Ինչպես ցույց է տրված Նկար 10-ում, բնակչության տեղահանումը (81%) մինչ օրս հանդիսանում է գործազուրկ փախստականների՝ իրենց նախորդ աշխատանքը թողնելու հիմնական պատճառը:

Նկար 10. Վերջին աշխատանքից դուրս գալու/աշխատանքը դադարեցնելու պատճառները (N=301)



Նկար 11. Գործազուրկ փախստականների նախկին վբաղմունքը (N=301)




Ինչ վերաբերում է գործազուրկ փախստականների նախկինում ունեցած աշխատանքին (տե՛ս Նկար 11), ապա ամենատարածված մասնագիտական խմբերը եղել են մասնագետները (25%), սպասարկման և վաճառքի ոլորտի աշխատողները (19%), պինձառայողները (11%), տեխնիկական և օժանդակ մասնագետները (11%), ինչպես նաև արհեստավորներն ու առևտրով զբաղվողները (10%): Այնուամենայնիվ, կարևոր է նշել, որ գործազուրկ փախստականների մասնագիտական պատկանելության վերաբերյալ տեղեկատվությունը հիմնված է 301 հիմնական պատասխանների վրա, որոնց մեծ մասը կանայք էին: Վերոնշյալ հինգ մասնագիտական խմբերից ամենատարածված մասնագիտություններն են պետական հաստատության ղեկավարը կամ մասնագետը, հաշվապահը, ուսուցիչը կամ մանկավարժը, բուժքույրը, խանութի սեփականատերը/վաճառողը, պինվորական անձնակազմը, խոհարարը և հացթուփը: Վերոնշյալ աշխատանքով նախկինում զբաղվող գործազուրկները հիմնականում բնակվում են Երևանում, սակայն նշված աշխատանքը զբաղեցրած գործազուրկների ըստ մարզերի բաշխվածությունը փոքր-ինչ տարբեր է: Օրինակ՝ Արարատի և Կոտայքի մարզերում ավելի շատ են որպես մասնագետ աշխատած կամ պինված ուժերում ծառայած անձինք, Կոտայքի մարզում ավելի շատ են սպասարկման և վաճառքի ոլորտում աշխատածները, իսկ Արարատի և Սյունիքի մարզերում արհեստներով և առևտրով զբաղվողները:

Աշխատանքի որոնում

Բոլոր հարցված գործազուրկ փախստականների 99%-ը փորձել է աշխատանք փնտրել կամ բիզնես սկսել հաշվառմանը նախորդող չորս շաբաթվա ընթացքում, և բոլորն էլ հայտնել են, որ կսկսեին աշխատել, եթե նման հնարավորություն ընձեռնվեր: Գործազուրկ անձանց մեծամասնությունը (82%) աշխատանք է փնտրել 3-ից 12 ամիսների ընթացքում: Ինչպես ցույց է տրված Նկար 12-ում, աշխատանք չգտնելու հիմնական պատճառներից մեկը եղել է թափուր աշխատատեղերի բացակայությունը (37%), որին հաջորդում են ցածր աշխատավարձերը (14%), կրթական որակավորմանը համապատասխան թափուր աշխատատեղերի պակասը (12%) և առկա աշխատատեղերի համար կամ չափավանց երիտասարդ, կամ չափավանց տարեց լինելը (9%):

Նկար 12. Գործազուրկների համար աշխատանք գտնելու խոչընդոտները (N=924)




Ինչ վերաբերում է ապագա աշխատանքի հետ կապված իրենց ակնկալիքներին, ապա հարցվածների 64%-ը կցանկանար աշխատել լրիվ դրույքով, իսկ մնացած հարցվածները նախընտրում էին աշխատել կես դրույքով: Կես դրույքով աշխատանքի պահանջարկը, ի տարբերություն լրիվ դրույքով աշխատանքի, զգալիորեն ավելի բարձր է գործազուրկ կանանց (56%), քան գործազուրկ տղամարդկանց շրջանում (14%): Ապագա աշխատանքի համար կարևորագույն չափանիշներն են բարձր եկամուտը (42%), աշխատավայրի ողջամիտ հեռավորությունը (22%) և ստացած կրթությանը համապատասխան աշխատանքը (21%): Այնուամենայնիվ, կարևոր է նշել, որ ապագա աշխատանքի ակնկալիքների վերաբերյալ տվյալները հիմնված են 355 հիմնական հարցված գործազուրկների պատասխանների վրա, որոնց մեծ մասը կանայք էին:

ԱՇԽԱՏՈՂ ԵՎ ԳՈՐԾԱԶՈՒՐԿ ԱՆՁԱՆՑ ԹՎԱՔԱՆԱԿԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ

Փախստականների պաշտպանության մակարդակը փոքր-ինչ ավելի բարձր է տղամարդկանց և բարձրագույն կրթություն ունեցող անձանց շրջանում: Տնտեսապես ակտիվ տղամարդկանց 55 տոկոսը, կանանց 47 տոկոսի համեմատ, աշխատանք ունի: Բարձրագույն կրթություն ունեցող տնտեսապես ակտիվ անձանց 55%-ը, հիմնական կրթություն ունեցողների 50%-ի և միջնակարգ կամ մասնագիտական կրթություն ունեցողների 48%-ի համեմատ, ունի աշխատանք: Զբաղվածության մակարդակը տարբեր տարիքային խմբերում նույնն է, բացառությամբ այն հանգամանքի, որ 65 և բարձր տարիքի անձինք ավելի քիչ հավանական է, որ պաշտպան լինեն, քան այլ տարիքային խմբերի պատկանող անձինք: Վերջապես, ինչպես ցույց է տրված Նկար 13-ում, գործազուրկ անձանց ամենամեծ տոկոսային մասնաբաժինն արձանագրվել է Կոտայքի, Լոռու և Տավուշի մարզերում, որոնք փախստականների շրջանում գործազուրկության ամենաբարձր մակարդակ ունեցող մարզերն են (տես Նկար 8):

Նկար 13. 2(աշխատող) փախստականների բաշխումն ըստ մարզերի (N=924)




ԱՇԽԱՏՈՒԺԻՑ ԴՈՒՐՍ ԳՏՆԿՈՂ ԱՆՁԱՆՑ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Աշխատուժի մաս չկազմող փախստականների մեծամասնությունը (65%) կանայք են, սակայն, ինչպես նախկինում նշվել է, այս եվրահանգումը կարող է կողմնակալ լինել այն փաստով պայմանավորված, որ տնային տնտեսության ղեկավարը/հիմնական հարցվողն ավելի հաճախ կին է եղել: Ինչպես ցույց է տրված Աղյուսակ 8-ում, աշխատուժի կազմում չընդգրկված անձինք սովորաբար ավելի երիտասարդ են (15-ից 24 տարեկան) կամ ավելի տարեց (55+ տարեկան): Սա տրամաբանական է, երբ դիտարկում ենք հաշվառումից մեկ շաբաթ առաջ չաշխատելու պատճառները (տե՛ս Նկար 14), քանի որ հարցվածների կեսից ավելին չէր աշխատում կամ սովորելու (28%), կամ թոշակի անցած լինելու (26%) պատճառով: Կարևոր է, սակայն, նշել, որ հարցվածների 33 տոկոսը չի աշխատել ընտանեկան պարտականությունների կամ տնային գործերով պարզված լինելու պատճառով:

Աղյուսակ 8. Աշխատուժի կազմում չընդգրկված տղամարդկանց և կանանց բաշխումն ըստ տարիքային խմբերի (N=1392)

Տարիքային խմբեր	Արական	Իգական	Ընդամենը%
15-24	40.1	26.3	31.1
25-34	5.80	11.5	9.50
35-44	10.7	15.0	13.5
45-54	10.9	9.50	10.0
55-64	12.8	16.6	15.2
65-74	19.8	21.1	20.6


Նկար 14. Աշխատուժի մաս չկազմող անձանց չաշխատելու հիմնական պատճառները (N=1392)



Նկար 15-ից պարզ է դառնում, որ կանանց ամենամեծ մասնաբաժինը, այսինքն՝ 41 տոկոսը, չի աշխատել ընտանեկան պարտականությունների կամ տնային գործերի պատճառով, մինչդեռ տղամարդկանց ընդամենը 8 տոկոսը չի աշխատել նույն

պատճառներով: Ի տարբերություն դրա, տղամարդկանց մեծ մասը չի աշխատում ուսման պատճառով (տղամարդկանց 33%-ը՝ կանանց 21%-ի համեմատ): Ընտանեկան պարտականություններով/տնային գործերով զբաղվող կանանց 6 տոկոսը հայտնել է, որ փորձել է աշխատանք գտնել, և նրանցից շատերը, ովքեր աշխատանք չեն փնտրել, կամ խնամել են երեխաներին (45%) կամ որևէ հիվանդությամբ են տառապել (14%):


Նկար 15. Հաշվառումից մեկ շաբաթ առաջ չաշխատելու պատճառներն ըստ սեռի (N=1392)



Նկար 16. Սովորող/տնային գործերով/ընտանեկան պարտականություններով զբաղվող անձանց բաշխումն ըստ մարզերի (N=848)

Սովորելու պատճառով աշխատուժից դուրս գտնվող փախստականների բաշխումը

Ընտանեկան պարտականությունների կատարման պատճառով աշխատուժից դուրս գտնվող փախստականների բաշխումը




Սովորող կամ ընտանեկան պարտականություններով/տնային գործերով զբաղված անձինք ի վերջո կարող են ընդգրկվել աշխատուժի կազմում, հետևաբար, այս հարցվածների բաշխումն ըստ մարզերի ուսումնասիրելը կարող է օգնել որոշելու, թե որտեղ պետք է ուղղել աշխատուժից դուրս գտնվող փախստականների աշխատանքային ներուժի մոբիլիզացման ջանքերը: Ինչպես ցույց է տրված Նկար 16-ում, հարցվածները հիմնականում բնակվում են Երևանում, սակայն նրանց թվում կան նաև Արարատի, Կոտայքի, Սյունիքի և Արմավիրի մարզերում բնակվողներ: Աշխատուժի մաս չկազմող փախստականների ընդամենը 4 տոկոսն է փորձել աշխատանք գտնել/բիվնես սկսել հաշվառմանը նախորդող չորս շաբաթվա ընթացքում (այն նույն պատճառներով, որոնք ցույց են տրված Նկար 14-ում և 15-ում), սակայն 38%-ը նշել է, որ կսկսի աշխատել, եթե հնարավորություն ընձեռվի, ինչը վկայում է տնտեսապես ոչ ակտիվ անձանց շրջանում աշխատաշուկայի չիրացված ներուժի մասին: Աշխատանքի անցնելու պատրաստակամություն հայտնած անձինք հիմնականում բնակվում են Երևանում (46%), Կոտայքի (13%) և Արարատի (12%) մարզերում: Այս հարցվածները հիմնականում կանայք են (հաշվի առնելով որպես տնային տնտեսության ղեկավար/հիմնական հարցվողների շրջանում կանանց չափապանց մեծ ներկայացվածությունը) և ըստ տարիքային խմբերի բավական հավասարաչափ են բաշխված, բացառությամբ այն հանգամանքի, որ նրանց մոտ մեկ քառորդը 15-ից 24 տարեկան է: Վերջապես, աշխատանքի անցնելու պատրաստակամություն հայտնած անձինք հաշվառումից մեկ շաբաթ առաջ տնտեսապես ոչ ակտիվ են եղել հիմնականում տնային գործերով կամ ընտանեկան պարտականություններով զբաղված լինելու (42%), ինչպես նաև սովորելու (21%) կամ թոշակի անցած լինելու (21%) պատճառով: Այս բացահայտումները ևս մեկ անգամ հաստատում են տնային գործերի/ընտանեկան պարտականությունների պատճառով տանը մնացած երիտասարդ կանանց շրջանում աշխատաշուկայի չիրացված ներուժի առկայությունը:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ՁԵՌՔ ԲԵՐԱԾ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

1050 հիմնական հարցվածներ (1050 տնային տնտեսություններից ընդհանուր թվով 4555 փախստականներից) պատասխանել են մասնագիտական կրթության և ուսուցման միջոցով ստացած իրենց հմտություններին և դրանց անհրաժեշտությանը վերաբերող մի շարք հարցերի: Հարցվածների մեծամասնությունը (83%) կանայք և աղջիկներ էին: Նրանց մոտ 30%-ը նշել է, որ պատրաստ է լրացուցիչ վերապատրաստում անցել կամ մասնագիտական կրթություն ստանալ: Հիմնական բացահայտումը, սակայն, այն է, որ արական և իգական սեռի փախստականներին առանձին դիտարկելիս պարզ է դառնում, որ լրացուցիչ վերապատրաստման պահանջարկը կանանց շրջանում երկու անգամ ավելի մեծ է (34%)՝ տղամարդկանց համեմատ (17%):


Լրացուցիչ վերապատրաստման կարիք ունեցող հարցվածների մեծ մասը 25-ից 44 տարեկան է (68%) և ունի բարձրագույն կրթություն (61%): Եթե խոսենք մասնավորապես փախստական կանանց մասին, ապա լրացուցիչ ուսուցման պահանջարկը հատկապես մեծ է 25-ից 44 տարեկան կանանց (74%) և բարձրագույն կրթություն ունեցողների շրջանում (63%): Ինչ վերաբերում է արական սեռի փախստականներին, ապա լրացուցիչ ուսումնառության կարիք ունեն 25-34 տարեկան (27%) և 45-54 տարեկան (37%), ինչպես նաև բարձրագույն կրթություն (50%) կամ միջնակարգ կրթություն (33%) ունեցող տղամարդիկ: Այլ կերպ ասած, փախստական տղամարդկանց ուսումնական դասընթացները կարող են ընդգրկել անձանց ավելի լայն շրջանակ՝ տարիքի և կրթության մակարդակի առումով, մինչդեռ փախստական կանանց համար կարող են ընդգրկել 25-44 տարեկան բարձրագույն կրթություն ունեցող անձանց: Այնուամենայնիվ, կարևոր է նշել լրացուցիչ ուսուցման անհրաժեշտության հարցի սուբյեկտիվությունը, այսինքն՝ այն փաստը, որ անձը (չի) ցանկանում է ստանալ լրացուցիչ ուսուցում, չի նշանակում, որ նա ավելի քիչ (ավելի շատ) վերապատրաստման կարիք ունի, քան մյուսները:

Նկար 17. Սովորող/տնային գործերով/ընտանեկան պարտականություններով վբաղվող անձանց բաշխումն ըստ մարզերի (N=848) by labour force status (N=1050)



Ինչպես ցույց է տրված Նկար 17-ում, լրացուցիչ վերապատրաստման կամ մասնագիտական կրթության կարիք ունեցող հարցվածների տոկոսային հարաբերությունը նույնն է աշխատողների շրջանում (34%) և գործազուրկների շրջանում (35%), սակայն զգալիորեն ցածր է նրանց շրջանում, ովքեր տնտեսապես ակտիվ չեն, այսինքն՝ աշխատուժի մաս չեն կապում (23%), կամ չեն պատկանում աշխատունակ տարիքի բնակչության թվին (10%): Այնուամենայնիվ, կան զգալի սեռային տարբերություններ արական և իգական սեռի փախստականների մասնագիտական վերապատրաստման կարիք ունեցողների միջև՝ կախված նրանց աշխատուժի կարգավիճակից (տե՛ս Նկար 18): Լրացուցիչ վերապատրաստման կարիք ունեցող արական սեռի փախստականները հիմնականում աշխատում են (40%) կամ աշխատանք չունեն (42%), և այս երկու խմբերի միջև էական տարբերություններ չկան: Ի տարբերություն դրա, փախստական կանայք, ովքեր մասնագիտական վերապատրաստման կարիք ունեն, շատ ավելի հավանական է, որ գործազուրկ լինեն (40%), քան աշխատանք ունենան (27%), ինչպես նաև ավելի հավանական է, որ լինեն աշխատուժից դուրս (33%)՝ հատկապես տղամարդկանց համեմատ: Սա նշանակում է, որ վերապատրաստման դասընթացները տեղի են ինչպես աշխատող, այնպես էլ գործազուրկ արական սեռի փախստականների համար, մինչդեռ իգական սեռի փախստականների դեպքում ավելի նպատակահարմար է կենտրոնանալ գործազուրկ կամ աշխատուժի մաս չկապող և լրացուցիչ վերապատրաստման կարիք ունեցող կանանց վրա:


Նկար 18. Վերապատրաստման կարիք ունեցող արական և իգական սեռի փախստականների բաշխումն ըստ աշխատուժի կարգավիճակի (N=310)



Լրացուցիչ վերապատրաստում անցնել ցանկացող հարցվածները հիմնականում բնակվում են Երևանում (46%), Կոտայքի (17%) և Արարատի (12%) մարզերում, այս ցուցանիշը նույնն է ինչպես փախստական տղամարդկանց, այնպես էլ կանանց դեպքում: Սակայն, ինչպես ցույց է տրված Նկար 19-ում, լրացուցիչ ուսուցման կարիք ունեցող փախստական ընտանիքների տոկոսային մասնաբաժինը յուրաքանչյուր մարզն առանձին դիտարկելիս ամենամեծն է Կոտայքի (38%), Տավուշի (33%), Շիրակի (33%) և Սյունիքի (32%) մարզերում:


Նկար 19. Լրացուցիչ ուսուցման կարիք ունեցող փախստական տնային տնտեսությունների տոկոսային մասնաբաժինն ըստ մարզերի (N=1050)

Լրացուցիչ ուսուցման կարիք ունեցող փախստական տնային տնտեսությունների տոկոսային մասնաբաժինն ըստ մարզերի (N=1050)



Տարբեր մասնագիտական կրթություն և փորձ ունեցող անձանց շրջանում լրացուցիչ վերապատրաստման պահանջարկը դիտարկելիս, նկատվում են որոշ տարբերություններ աշխատող և գործազուրկ անձանց միջև: Ինչպես ցույց է տրված Նկար 20-ում, վերապատրաստման պահանջարկը, որպես կանոն, ավելի բարձր է աշխատող անձանց շրջանում, ովքեր աշխատում են որպես ղեկավարներ (67%), տեխնիկական և օժանդակ մասնագետներ (53%) և սպասարկման ու վաճառքի ոլորտի աշխատողներ (34%): Գործազուրկ անձանց շրջանում վերապատրաստման պահանջարկն ավելի բարձր է այն անձանց շրջանում, ովքեր նախկինում աշխատել են որպես գործավար-օգնականներ (100%), ղեկավարներ (67%) և գյուղատնտեսության, անտառտնտեսության և ձկնաբուծության ոլորտի աշխատողներ (50%): Այս բացահայտումները ենթադրում են, որ ապագա վերապատրաստման ծրագրերը պետք է ուշադրություն դարձնեն աշխատող և գործազուրկ փախստականների մասնագիտական կրթության և փորձի տարբերություններին:

Նկար 20. Յուրաքանչյուր մասնագիտության շրջանակներում վերապատրաստման կարիք ունեցող գործազուրկ (աշխատող) փախստականների տոկոսային մասնաբաժինը (N=561)



Բացի այդ, յուրաքանչյուր մասնագիտական կատեգորիայի շրջանակներում լրացուցիչ վերապատրաստման պահանջարկը (գործազուրկ) աշխատող տղամարդկանց և կանանց դեպքում տարբեր է: Ինչ վերաբերում է աշխատող փախստականներին, լրացուցիչ վերապատրաստում անցնել ցանկացող կին փախստականների մասնաբաժինն ավելի մեծ է սպասարկման և վաճառքի ոլորտում աշխատողների (40%) և մասնագետների (25%) շրջանում, մինչդեռ լրացուցիչ վերապատրաստում անցնել ցանկացող տղամարդ փախստականների մասնաբաժինն ավելի մեծ է սպասարկման և վաճառքի ոլորտի աշխատողների (29%), կայանքների և սարքավորումների օպերատորների և հավաքակցողների (24%) շրջանում: Ինչ վերաբերում է գործազուրկ փախստականներին, ապա լրացուցիչ վերապատրաստման կարիք ունեցող փախստական կանանց մի մասը նախկինում աշխատել է որպես մասնագետ (40%) և սպասարկման և վաճառքի ոլորտում (19%), մինչդեռ լրացուցիչ վերապատրաստման կարիք ունեցող փախստական տղամարդկանց 23%-ը նախկինում աշխատել է վիճակառիշտ, իսկ 19%-ը՝ սպասարկման և վաճառքի ոլորտում: Հետևաբար, ապագա վերապատրաստման ծրագրերը պետք է մշակվեն՝ հաշվի առնելով փախստական տղամարդկանց և կանանց մասնագիտական պատրաստվածության առանձնահատկությունները, որոնք պարտադիր չէ, որ համընկնեն (բացառությամբ նրանց, ովքեր ունեն աշխատանքային փորձ սպասարկման և վաճառքի ոլորտում):


Աղյուսակ 9. Լրացուցիչ վերապատրաստում անցնելու պատճառներն ըստ սեռի (N=310)

Լրացուցիչ վերապատրաստում անցնելու պատճառները	Արական (%)	Իգական (%)
Ստանալ պաշտոնի բարձրացում ներկայիս աշխատանքում	9.6	18.2
Ավելի լավ արդյունավետություն ցուցաբերել ընթացիկ աշխատանքում	7.7	5.0
Գտնել այլ աշխատանք նույն ոլորտում	5.8	6.6
Գտնել այլ աշխատանք այլ ոլորտում	17.3	15.5
Ընդհանրապես գտնել աշխատանք	55.8	51.6
Այլ	3.8	3.1
ԸՆդամենը	100.0	100.0

Լրացուցիչ վերապատրաստում անցնելու համար դիմելու հիմնական պատճառը (ինչպես հայտնել է լրացուցիչ վերապատրաստման կարիք ունեցող 1050 հիմնական հարցվածներից 310-ը) ընդհանրապես աշխանք գտնելն է (52%) կամ այլ ոլորտում աշխատանք գտնելը (16%): Տղամարդկանց և կանանց կողմից ներկայացված պատճառներն առանձին դիտարկելիս (տե՛ս Աղյուսակ 8) ամենամեծ տարբերությունն այն է, որ լրացուցիչ վերապատրաստում անցնել ցանկացող իգական սեռի փախստականներն ավելի շատ շեշտը դնում են ,իրենց ներկայիս պաշտոնում առաջխաղացում ստանալու ցանկության վրա, քան լրացուցիչ վերապատրաստում անցնել ցանկացող տղամարդիկ (18%՝ կանանց և 10%՝ տղամարդկանց շրջանում): Մյուս կողմից, արական սեռի փախստականները փոքր-ինչ ավելի հակված են լրացուցիչ վերապատրաստում անցնելու համար դիմելու ,ընդհանրապես աշխատանք

գտնելու համար (տղամարդկանց 56%-ը կանանց 51%-ի նկատմամբ): Վերջապես, ինչպես ցույց է տրված Նկար 21-ում, հարցվածների մեծամասնությունը (65%) նախընտրում է անցնել 1-ից 3 ամիս տևողությամբ ուսուցում:

Նկար 21. Ուսուցման նախընտրելի տևողությունը (N=310)




Անդրադառնալով փախստականների կոնկրետ թվային տեխնոլոգիաների տիրապետման, լեզվի իմացության և փափուկ հմտություններին՝ լրացուցիչ վերապատրաստում անցնել ցանկացողների զգալի մասը (մոտ 50%) վստահ չեն չգում հիմնական թվային գործիքներն օգտագործելիս, ինչպիսիք են՝ էլեկտրոնային փոստի հավելվածները, ինտերնետ բրաուզերները, Microsoft Office հավելվածները, տեսակապի հավելվածները և սոցիալական ցանցերը (տե՛ս Նկար 22): Մյուս կողմից, ավելի քան 20%-ը հայտնել է, որ իրեն վստահ է չգում կամ լրացուցիչ ուսուցման դեպքում կարող է վստահ չգալ առավել առաջադեմ թվային գործիքներ օգտագործելիս, ինչպիսիք են լուսանկարների խմբագրման և դիզայնի ծրագրակալվը, վաճառքի և շուկայավարման և հաշվապահական հաշվառման ծրագրերը: Այս անձինք հիմնականում բնակվում են Երևանում, Կոտայքի և Արարատի մարզերում:

Նկար 22. Հիմնական հարցվածների թվային տեխնոլոգիաների տիրապետման հմտությունները (N=1050)



Ինչպես ցույց է տրված Նկար 23-ում, հարցվածները բավականին վստահ են ռուսաց լեզվի իրենց իմացության, բայց ավելի քիչ՝ անգլերենի իմացության հարցում: Այնուամենայնիվ, հարցվածների մոտ 50%-ը կամ ավելին հայտնել են նաև երրորդ լեզվին տիրապետելու մասին, որոնցից ամենատարածվածը ադրբեջաներեն, գերմաներեն և ֆրանսերեն լեզուներն են: Հարցվածների ավելի քան 60%-ը հայտնել է այնպիսի հմտությունների բացակայության մասին, ինչպիսիք են հրապարակային ելույթները, Վեբինարների պատրաստումը, տեխնիկական տեղեկատվությունը լայն լսարանին հասցնելը, անձնակազմի կառավարումը և ինքնակենսագրականների և ուղեկցող նամակների կազմումը:

Նկար 23. Հիմնական հարցվածների լեզուների իմացությունը և փափուկ հմտությունները (N=1050)



■ Լիովին վստահ (%)
■ Համեմատաբար վստահ (%)
■ Օգնությամբ/վերապատրաստման շնորհիվ (%)
■ Ոչ վստահ (%)

Փախստականների բնութագրերն ավելի լավ հասկանալու նպատակով, ովքեր նշված փափուկ հմտություններից մի քանիսի հետ կապված լրացուցիչ վերապատրաստման կարիք կունենան, ,վստահ չեմ պզումե կամ ,վստահ կզգամ լրացուցիչ վերապատրաստման դեպքումե պատասխան տված հարցվածները ներառվել են մեկ կատեգորիայի մեջ, որն այժմ մենք անվանում ենք ,ոչ բավարար հմտություններ ունեցող: Համեմատվել են ,ա) պրեզենտացիաների պատրաստում և հրապարակային ելույթներ, բ) վեկույցների պատրաստում և գրավոր հաղորդակցության այլ ձևեր, գ) տեխնիկական տեղեկատվությունը լայն լսարանին հասցնելը, դ) ծրագրի իրականացման համար անձնակազմի ղեկավարում և ե) ինքնակենսագրականների և ուղեկցող նամակների կազմումե կատեգորիաներում ոչ բավարար հմտություններ ունեցող անձինք՝ ըստ սեռի, աշխատուժի կարգավիճակի և կրթական մակարդակի:

- Պրեզենտացիաների պատրաստման և հրապարակային ելույթներ ունենալու գործում ոչ բավարար հմտություններ ունեցող անձանց թվում գերակշռում են տղամարդիկ (84%), 55-74 տարեկան անձինք (89%), միջնակարգ կամ միջին մասնագիտական կրթություն ունեցողները (92%) և աշխատուժից դուրս գտնվող անձինք (86%)
- Զեկույցներ կազմելու գործում և գրավոր հաղորդակցության այլ ձևերում ոչ բավարար հմտություններ ունեցող անձանց թվում ավելի հաճախ հանդիպում են 45 և բարձր տարիքի անձինք (88%), միջին մասնագիտական և ավելի ցածր մակարդակի կրթություն ունեցողները (90%) և աշխատուժից դուրս գտնվող անձինք (89%):

- Ծրագրի իրականացման համար անձնակազմի ղեկավարման գործում ոչ բավարար հմտություններ ունեցող անձանց թվում գերակշռում են կանայք (79%), 55 և բարձր տարիքի անձինք (91%), միջին մասնագիտական կամ ավելի ցածր մակարդակի կրթություն ունեցողները (84%) և աշխատուժից դուրս գտնվող անձինք (85%):
- Ինքնակենսագրականների և ուղեկցող նամակների կազմման գործում ոչ բավարար հմտություն ունեցողների թվում առավել հաճախ հանդիպում են տղամարդիկ (74%), 65 և բարձր տարիքի անձինք (96%), միջին մասնագիտական կամ ավելի ցածր մակարդակի կրթություն ունեցողները (87%) և աշխատուժից դուրս գտնվող անձինք (85%):

Այսպիսով, թեև որոշ տարբերություններ կան նշված ոլորտներում ոչ բավարար հմտություններ ունեցող փախստականների բնութագրերում, մենք կարող ենք եզրակացնել, որ ոչ բավարար հմտություններ ունեցողներն ավելի հաճախ հանդիպում են ավելի տարեց, ավելի ցածր մակարդակի կրթություն ունեցող և աշխատուժից դուրս գտնվող անձանց շրջանում:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աշխատող փախստականների խոցելիությունը

- Գործավարական աշխատանք կատարող, ինչպես նաև գյուղատնտեսության, անտառտնտեսության և ձկնաբուծության, արհեստագործական և առևտրային ոլորտներում աշխատող փախստականների համար ամենամյա արձակուրդից օգտվելու հնարավորության դյուրացում:
- Որպես կառավարիչներ, գործավարներ, ինչպես նաև գյուղատնտեսության, անտառտնտեսության և ձկնաբուծության ոլորտներում աշխատող փախստականների համար ժամանակավոր անաշխատունակության (հիվանդության) արձակուրդից օգտվելու հնարավորության դյուրացում:
- Գյուղատնտեսության, անտառտնտեսության և ձկնաբուծության ոլորտում, ինչպես նաև որպես կայանքի և սարքավորումների օպերատոր, հավաքակցող աշխատող և արհեստագործական և առևտրային ոլորտում աշխատող փախստականների՝ ֆիզիկական անձանց եկամտահարկի և սոցիալական ապահովության վճարների հետ կապված գործատուների և աշխատակիցների պարտավորությունների մասին տեղեկատվության տրամադրում:
- Աջակցություն սպասարկման և վաճառքի ոլորտում կամ որպես կայանքի կամ սարքավորումների օպերատոր աշխատող փախստականներին (գործատուներ/ինքնապաբաղված անձինք/ընտանիքի անդամներին օգնող՝ առանց վարձատրության աշխատող)՝ իրենց անձնական կամ ընտանեկան բիզնեսը կամ ֆերմերային տնտեսությունը գրանցելու հարցում:

Գերորակավորում

- Սպասարկման և վաճառքի ոլորտներում աշխատող կամ հատուկ որակավորում չպահանջող (տարրական) աշխատանք կատարող 22-44 տարեկան կին փախստականներին իրենց որակավորմանը համապատասխան աշխատանքային հնարավորությունների ապահովում:
- Ուշադրության կենտրոնացում վարձու աշխատողների կրթական և վերապատրաստման կարիքների վրա, ովքեր, սեփական բիզնես ունեցողների համեմատ, ունեն փոքր-ինչ ավելի ցածր կրթական մակարդակ:
- Տնային աշխատողներին կամ ընտանիքի անդամին օգնող՝ առանց վարձատրության աշխատողներին, ինչպես նաև սպասարկման և վաճառքի, արհեստագործական և առևտրային ոլորտներում աշխատող, կայանքների և սարքավորումների օպերատոր աշխատող և տարրական աշխատանք կատարող փախստականներին իրենց որակավորմանը համապատասխան աշխատանքային հնարավորությունների ապահովում:

Գործադրություն

- Աշխատանքային հնարավորությունների որոնում միջին մասնագիտական կրթություն ունեցող փախստականների համար, քանի որ նրանք, որպես կանոն, ավելի քիչ հավանական է, որ աշխատանք ստանան, քան բարձրագույն կրթություն ունեցողները:
- 45 տարեկան և դրանից բարձր տարիքի փախստականների համար մասնագիտական որակավորում պահանջող աշխատանքների և 25-44 տարեկան փախստականների համար բարձրագույն կրթություն պահանջող աշխատանքների առաջնահերթության սահմանում:
- Աշխատատեղերի ստեղծում մասնագիտական գործունեության, սպասարկման և վաճառքի ոլորտում, զինված ուժերում, տեխնիկական և հարակից մասնագիտական և արհեստագործական ու առևտրային ոլորտներում աշխատած անձանց համար՝ ուշադրությունը կենտրոնացնելով պետական հաստատություններում ղեկավարների կամ մասնագետների, հաշվապահների, դասախոսների կամ ուսուցիչների, բուժքույրերի, խանութպանների/վաճառողների, զինվորական սպաների, խոհարարների և հացթուխների վրա:
- Կես դրույքով աշխատանքային հնարավորությունների ստեղծում, հատկապես գործազուրկ կին փախստականների համար, ովքեր ավելի մեծ նախապատվություն են տվել կես դրույքով աշխատանքին, քան գործազուրկ տղամարդ փախստականները:

Ժամանակի հետ կապված թերզբաղվածություն

- Մեծացնել սպասարկման և վաճառքի ոլորտում աշխատող կամ մասնագիտական գործունեությամբ զբաղվող փախստականների համար լրիվ դրույքով աշխատանքի ընդունվելու կամ ավելի երկարաժամկետ և մշտական աշխատանքային պայմանագրեր կնքելու հնարավորությունները:
- Ավելացնել Լոռու, Շիրակի և Կոտայքի մարզերում աշխատող մասնագետների, կայանքների և սարքավորումների օպերատոր և հավաքակցող աշխատող, արհեստագործական և առևտրային ոլորտում աշխատող և այլ վարձու աշխատանք կատարող փախստականների աշխատաժամերը:

Աշխատանքային ռեսուրսներ / ոչ լիարժեք օգտագործում (թերօգտագործում)

- Կենսապահովման կամ կես դրույքով աշխատանքի հնարավորությունների ստեղծում ընտանեկան պարտականություններ կատարող/տնային գործերով զբաղվող կանանց համար, ովքեր աշխատել սկսելու ցանկություն են հայտնում:
- Աշխատուժից դուրս գտնվող (ընտանեկան պարտականությունների կատարման կամ կրթություն ստանալու/վերապատրաստվելու պատճառով), սակայն աշխատել սկսելու ցանկություն հայտնած անձանց ներառելու փորձեր կատարելու համար թիրախավորել Արարատի, Կոտայքի, Սյունիքի մարզերը և Երևանը:

Վերապատրաստման ընդհանուր պահանջարկ

- Առաջնահերթություն տալ Կոտայքի, Տավուշի, Շիրակի և Սյունիքի մարզերում գտնվող կանանց և փախստականների վերապատրաստմանը, քանի որ վերապատրաստման պահանջարկն, ընդհանուր առմամբ, ավելի մեծ է այս ենթախմբերին պատկանող փախստականների շրջանում:
- Փախստական կանանց համար նախատեսված դասընթացները կարող են ուղղված լինել 25-ից 44 տարեկան անձանց, գործազուրկներին կամ աշխատուժից դուրս գտնվող անձանց, ինչպես նաև սպասարկման և վաճառքի ոլորտում աշխատանքային փորձ ունեցող կամ մասնագետ հանդիսացող անձանց:
- Արական սեռի փախստականների համար նախատեսված դասընթացները կարող են ուղղված լինել 25-ից 34 տարեկան կամ 45-ից 54 տարեկան անձանց, մասնագիտական կրթություն կամ բարձրագույն կրթություն ունեցող անձանց, վարձու աշխատողներին կամ գործազուրկներին, ինչպես նաև սպասարկման և վաճառքի ոլորտում փորձ ունեցող անձանց, զինված ուժերում կամ որպես կայանքների և սարքավորումների օպերատորներ և հավաքակցողներ աշխատած անձանց:
- Վերապատրաստման դասընթացները պետք է տևեն 1-ից 3 ամիս:

Թվային տեխնոլոգիաների տիրապետման, լեզուների իմացության և փափուկ հմտությունների կարիք

- Երևանի, Կոտայքի և Արարատ մարզերի փախստականների լրացուցիչ ուսուցման ապահովում առավել առաջադեմ թվային գործիքների օգտագործման համար, օրինակ՝ լուսանկարների խմբագրման և դիվայնի ծրագրակապմը, վաճառքի և շուկայավարման և հաշվապահական հաշվառման ծրագրերը:
- Լրացուցիչ լեզուների տիրապետող անձանց (օրինակ՝ ռուսերեն, ֆրանսերեն կամ գերմաներեն) համար հնարավորությունների որոնում:
- Վերապատրաստման դասընթացների անցկացում փափուկ հմտությունների վերաբերյալ, օրինակ՝ պրեզենտացիաների պատրաստում, հրապարակային ելույթներ, Վեկույցների և հաշվետվությունների պատրաստում, արդյունքների փոխանցում, ինքնակենսագրականների պատրաստում և անձնակապմի կառավարում:
- Վերոնշյալ դասընթացները կարող են նախատեսված լինել 45 տարեկան և դրանից բարձր տարիքի անձանց, աշխատուժից դուրս գտնվող անձանց, ինչպես նաև մասնագիտական կամ ավելի ցածր մակարդակի կրթություն ունեցող անձանց համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄՍՏԱՏ (2023թ.) Աշխատանքի շուկան Հայաստանում, 2023թ. Աշխատուժի հետապոստության արդյունքներ:

Հասանելի է <https://armstat.am/en/?nid=82&id=2625> հասցեով

ԱՄԿ (2013թ.) Աշխատանքի վիճակագիրների միջազգային համաժողով:

Աշխատանքի, վերադրվածության և աշխատուժի թերօգտագործման վերաբերյալ բանաձև: Հասանելի է <https://ilostat.ilo.org/methods/concepts-and-definitions/description-work-statistics-icls19/> հասցեով:

ՄԱԿ ՓՀԳ (2023) Կարիքների օպերատիվ գնահատման միջգերատեսչական վեկույց, 2023թ. հոկտեմբեր: Հասանելի է <https://reliefweb.int/report/armenia/armenia-inter-agency-rapid-needs-assessment-report-october-2023> հասցեով:

ՅՈՒՆԻՍԵՖ (2024թ.) Հայաստանի հումանիտար իրավիճակի մասին վեկույց թիվ 16, 2024 թվականի հունվարի 1-ից հունիս 30-ը: Հասանելի է <https://reliefweb.int/report/armenia/unicef-armenia-humanitarian-situation-report-no-16-01-january-30-june-2024> հասցեով:

Վարդանյան և գործընկերներ (2024թ.) Հարկերը Հայաստանում: Մուտք են գործել 13.08.24թ. Հասանելի է <https://armenian-lawyer.com/taxes-armenia/#:~:text=As%20of%202024%2C%20the%20rate,for%20deducting%20social%20security%20payments> հասցեով:

